№ 10 (227) XXII ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

„ՄԵՆՔ ԾՈՎԸ ԿԸՆԵՏԻՆՔ"

Եւրոպական Թիւրքիոյ յաշտու

, բալկանեան դաշնակիցների գահավէժ ու շշմեցուցիչ ընթացքը, ընդհանուր պատերազմի երկիւղը և բոլոր նման իրողութիւնները չեն, որ կը գրաւեն և կ'ալէկոծեն մեր միտքը ներկայ փոթորկոտ օրերում, այլ այն մութ, յամառ ու չարագուշակ լուրերը, որ գալիս են ամեն օր հայկական վիլայէթներից։ Նրանք խօսում են նոր չարդերի հաւանականութեան մասին, գուժում են անընդհատ սպանութիւններ ու բռնութիւններ։ Նրանք պատմում են համատարած սարսափը, հայ ժողովրդի յուսակտուր հաւարն ու խուճապը, նրա լքած ու անճար կացութիւնը, նրա անարգ, խեղկորոյս փախուստը։ Նրանք տալիս են մի անգամ ևս այդ ամբոխ-ժողովրդի հոգեբանութեան նկարագիրը, որ հազարաւոր ձևերով ներկայացել է մեզ մօտ ու Եւրոպայում, 1894-ի աղէտաւոր օրերից ի վեր...

Մի հօտ, մի նախիր՝ որ գիտէ միայն տրորուել ու բառաչել։ Ազատութեան օրերում՝ անփոյթ որոճալ, իսկ վտանգի օրերում՝ ողբալ ու աղերսել։ Գրում են ընկերները, գրում են ու հեռագրում եւրոպացի թղթակիցները։ Ամենքը՝ նոյն ձևով, նոյն ծանօթ, վաղեմի, աւանդական մանրամասներով։ Ձեն յուզում, այլ նողկանք են միայն շարժում։ Ձեն զարթեցնում կարեկցութեան ու մարդկայնութեան զգացում քաղաքակիրթ աշխարհի մէջ, այլ սոսկ միայն արգահատանք ու արհամարհանք։

Ահա մարդկային նախիրը հայաշատ Վասպուրականում։ Քրդական գրոհի ուրուականը երևալուն պէս՝ նա փախչում է գահավէժ իր բարձունքներից, դիմում է հազարաւոր բազմութեամբ դէպի քաղաք և „ցոյց" է անում կառավարութեան ներկայացուցչին, վալիին...

„Ցուե՛ք մեզ ապահովութիւն, ապա թէ ոչ մեզ կը մնայ ծովը նետուիլ"։

Նախիրը ցոյց է անում, սպառնալով... Ծովը նետուիլ...

Վալին, հարկաւ, ազդւում է սպառնալիքից և խոստանում է չարագործներին պատժելու համար՝ ամեն բան անել, այսինքն ոչինչ չ'անել։ Եւ վերջանում է այդպիսով հայկական եղերակատակը։ Եւ հազար ու մէկերորդ անգամը յուսադրուած ու խաբուած՝ կը ցրուի երամը... Եւ դարձեալ՝ կ'ապաւինէ իր ինքնակրաւորականութեան, իր անմիտ, զաւեշտական սպառնալիքներին.

— „Մենք ծո՛վը կը թափուինք, մենք կը դառնանք օրթոդոքս, մենք կը նետուինք Ռուսիոյ գիրկը"։

Օ՛, յաւիտենական, անբուժելի լալկան։ Ի՞նչ էիր անում չորս տարի շարունակ, երբ ազատութեան ռէժիմը հնարաւորութիւն էր տալիս քեզ՝ զինուելու, գէթ այն չափով, որ չափով անհրաժեշտ է ինքզինքդ պաշտպանելու համար,

Իրաւունք չունի՞ Պիէռ Լոթի, երբ համեմատում է հայաստանցուն ճագարի հետ... Իրաւունք չունի՞ քաղաքակիրթ մարդկութիւնը, երբ տաղտուկով ու արհամարհոտ անտարբերութեամբ է դիմաւորում հայկական այդ անվերջ հաւա՛ղներին ու աղերսներին... Որտե՞ղ է տեսնուած այդքան մեղկ անտարբերութիւն դէպի սեփական գոյութեան հարցը, այդքան թուլամորթ երկչոտութիւն զէնքի առաջ... Քսան տարի է, ինչ հայ յեղափոխականը հնչեցնում է զարհուրանքի այդ վայրերում իր յուսահատ ու պաղատագին կոչը՝ զինուե՛լ, մարզուել, դիմադրել։ Եւ քսան տարուայ փոթորկալի արկածներից յետոյ—ուր ապստամբ փոքրամասնութիւնը արիութեան հրաշքներ գործեց—զանգուածը մնաց միշտ նոյնը, հայ ժողովուրդը, սակաւ բացառութեամբ, նոյն անքան ու որոճող նախիրը, որ պատրաստ է մի խումբ զինուած քրդերի առջև փախուստ տալ, „կծիկը դնել"։ Որքան այդ ըմբոստ փոքրամասնութիւնը արի է, յանդուգն ու վճռական—այնքան զանգուածը բութ է, անշարժ, անկորով։

Ի՞նչ է հրահանգում այդ ողբալի իրականութիւնը։

Այն՝ որ միակ փրկութեան խարխիլը նոյն յեղափոխական փոքրամասնութիւնն է, նոյն փոքրաթիւ բանակն է քաջերի, „ընտրեալների", որոնց բազմաչարչար ուսերի վրայ տարել է հայկական շարժման քսանամեայ անիւը և որոնք երբեմն քարշել են իրենց եռքից ժողովրդային զանգուածը։

Այն՝ որ պարտաւոր ենք գնահատել, գուրգուրանքով շրջապատել ըմբոստութեան ամեն տեսակ զինուորներին, այն անձնուրաց և անվեհեր „խենթերին", որ գալիս են փոքր ինչ առնական արամադրութիւն հաղորդելու Հայաստանի անդամալոյծ և կնացած մարդկութեանը։

Այն՝ որ ոճիր է — դաւաճանութեան հաւասար մի ոճիր—ձգտել ոչնչացնելու կամ թէկուզ վարկաբեկելու յեղափոխական կազմակերպութիւնը, որ միակ պատուարն է ազգային ինքնապաշտպանութեան։ Դէպքերը, ամենօրեայ դառն փորձը գալիս են միշտ աւելի համոզելու, որ առանց այդ մարտական կորիզների, անհնարին է, անհերևակայելի՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը։ Այդպէս էր Կովկասի մէջ 1905 — 906 թուականներում, այդպէս է — ևս առաւել — Թիւրքահայաստանում։

Բայց ո՞ւմ էք քարոզում այդ տխուր ճշմարտութիւնները...

Ահա կամաւոր խուլեր, որոնց երբէք չէք համոզի, որովհետև նրանց ճշմարիտ ղեկավարը ազգային տագնապի գիտակցութիւնը չէ, այլ իրենց զազրելի կիրքը և հնաւանդ ատելութիւնը։

Ահա մարդիկ, թո՛ւք ու մուր մարդիկ, որոնք պատրաստ են ժողովրդային ինքնապաշտպանութեան գործն անգամ վիժեցնելու, լոկ այն պատճառով՝ որ նրա կրողը պէտք է լինի իրենց հակառակորդ կազմակերպութիւնը։

Ահա մի հին հայ գրող մեծաշուքնդ պաֆՕսով ռազմի հրաւէր է կարդում „հայ առիւծներին“, Գամառ-Քատիպայի ծննդավայրից.

Շտապեցէ՛ք տալ կնունքի զանգակները... Մեզ բա՞ւ են թաղումներ... Ժամանա՛կ է ապրելու... Ցղե՛ր, տուէ՛ք կնունքի զանգակը...

Այո՛, այո՛... և այդ ցաւագար, այդ հիստերիկ ճիչերի հեղինակը գուցէ մի վայրկեան չի էլ կասկածում, որ այն օրգանը, որի մէջ շեփորում է նա հայկական ըմբոստացումն ու հրաւէր է կարդում „ցղերքին“, „հայ առիւծներին“,—տարիներ շարունակ, դաւաճանի տենդային եռանդով, փորել է այդ ըմբոստացման միակ խարիսխը, կրծոտել է այդ „ցղերքի“ գարշապարը, ձգտել է ամեն գնով — հայկական բուրժուազիայի լռելեայն կամ գործօն աջակցութեամբ—քանդել ու սրբապղծել այն միակ օճախը, որի մէջ պատրաստուում, մշակուում են այդ „ցղերքը“, այդ „կնունքի“ ռահվիրաները։

Նա մոռանում է, այդ նորատիպ Գամառ-Քատիպան, որ նոյն օրգանի պօլսական համարը—որի անունը նոյնպէս չենք յիշատակում, „Դրօշակի“ էջերը խնայելով—դեռ ընդամենը մի ամիս առաջ քաջութիւն ունեցաւ իր ցած սրտի անմաքրութիւններն արտավիժելու այն սակաւաթիւ հայ ինքնապաշտպան խմբերի վրայ, որոնք ներկայ մահացու տագնապի մէջ անհնարին ճիգեր են թափում՝ ժողովրդին փրկելու համար քրդական ժանիքներից։

Ո՞ւմ էք քարոզում։ Ահա այստեղ է, որ պէտք է մի նոր Գամառ-Քատիպա, նշաւակելու, ձաղկելու համար հայկական այդ զազիր մտայնութիւնը, որ առաջնորդում է ճակատագրօրէն դէպի կորուստ...

Ո՞ւմ էք քարոզում... Դրական աշխատանքի անընդունակ, բացասականի մէջ ժիր ու համարձակ՝ այդ պարոնները պիտի հասկանա՞ն երբևիցէ, որ լինում են ազգերի կեանքում վճռական վայրկեաններ, երբ կիրքը —ցած, անարգ պառակտիչ կիրքը—պէտք է լռէ, երբ երէկուայ ամենաանհաշտ հակառակներն անգամ պէտք է միանան ու թեւ թեւի պատնէշ կանգնեն ազգակործան հոսանքների դէմ...

ՖԱՂԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պալքանեան պատերազմին տխուր դրւագները իրենց առաջ բերած բոլոր արհաւիրքներուն հետ ունեցան նաև շատ հետաքրքիր և առողջ հետևանք մը. անոնք առիթ տուին տեսնելու, զինուորական և դրամատիրական շահերով կուրացած ամենէն բուռ հոգիներուն անգամ, որ կա՛յ, այլ ևս իրապէ՛ս կայ, տիրող դասակարգերու տրամադրած ուժերէն դուրս Զօրութիւն մը, Ազգակ մը ևս, զոր Աշխարհի Կառավարողները պէտք է նկատի ունենան այսուհետև իրենց բոլոր հաշիւներուն մէջ և որ այդ Զօրութիւնը կը կոչուի Աշխատաւորութիւն։

Պալքանեան պատերազմին հետ կապ ունեցող մէկ քանի բարդութիւններ, — Նովի-Պազարի խնդիր, Նեղուցներու խնդիր, Ադրիանի Նաւահանգիստներու և Ալպանիոյ խնդիր,—հազիւ թէ սկսեր էին սև բիծերու պէս ուրուագծիլ եւրոպական քաղաքականութեան արդէն մառախլապատ հորիզոններուն վրայ, իբրև չարագուշակ նշաններ հաւանական փոթորիկներու, և ահա Մեծ Հայրը նախազգաց վտանգը որ կը պատրաստուէր, չափեց անոր ահաւոր խորութիւնը, և շարժեցաւ իր կարծիքը նետելու համար ընդհանուր մտահոգութեանց սեղանին վրայ։

Արտադրողներու բանակը յայտնեց շարք մը ցոյցերով ու որոշումներով, որ այլ ևս տրամադիր չէ դառնալու թնդանօթի միս, որ ինքը ատելով կ'ատէ բարբարոսական ուերման ու գազանական ոճիրի այն նուիրագործուած ձևը, որ կը կոչուի պատերազմ, թէ շահագործուածներն ու տառապողները շատոնց ջնջեր են սահմանները ու իշխողներու գլուխներուն վրայէն անցնելով իրարու կարկառեր ոնդրդուելի եղբայրութեան ձեռքեր, և որ վերջապէս, եթէ կառավարող տարրեր ըլլան այնքան յիմար, որ յանդգնին մեծ ու փոքր տասնեակ մը ազգերու միլիոնաւոր սուիններն իրար դէմ ծառացնել ու մարդկային վիթխարի սպանդանոցի մը վերածել Եւրոպական Աշխարհը, իրենք իրենց զէնքերը պիտի ուղղեն ոչ այլ ևս իրարու, այլ այդքան հրէշային միտքի մը առջև անգամ չնահանջող ոճրագործներուն կուրծքին և պիտի մեռնին իրականացնելու համար ընկերային Մեծ Յեղափոխութիւնը։

Բացի՝ անջատանջատ, իւրաքանչիւր երկրի աշխատաւորութեան կողմէ սարքուած բազմաթիւ միթինկցոյցերէն՝ ընդդէմ համաեւրոպական պատերազմի մը գաղափարին, նոյեմբեր 17-ի օրը Եւրոպայի գրեթէ

բոլոր մայրաքաղաքներուն և գլխաւոր քաղաքներուն մէջ տեղի ունեցան հսկայ հաւաքումներ նոյն մտքով, կարգադրութեամբ Միջազգային Ընկերվարական Բիւրոյին ու մասնակցութեամբ ժամանակակից ընկերվարութեան ամենէն աչքառու դէմքերուն—ինչպէս Քէյր Հարդի, Ժորէս, Վանդերվելդ, Բէբէլ, Լիպքնէխտ, Հիւզման, Պիրնէրսթորֆէր և այլն։ Ամենուրեք, աշխատաւորութիւնը հարիւր-հազարներով խռնուած իր լիաբերանն շուրջը, միապաղաղ ու կարգապահ, հրապարակ դրաւ իր երկաթեայ ուժը և վճռեց անգամ մը ալ բուրժուազական պատերազմին պատասխանել պատերազմով, ապստամբութեամբ,—Guerre à la guerre!։

Եւ միջազգային աշխատաւորութեան կողմէ ի հեճուկս դրամատիրական խաղաղասիրութեան և անոր Լա-Հէեան կոթողներուն ի յայտ բերուած այս հիմնապէս անդրդուելի մտադրութիւնը՝ ոնէ պատերազմի գաղափար իր սաղմին մէջ իսկ խեղդելու մասին՝ այնքան աւելի տպաւորիչ եղաւ ու ահարկու՝ կառավարող կարգերուն համար, որքան այս հարցին առթիւ աշխատաւորութեան բոլոր հոսանքներուն միջև տիրող համերաշխութիւնը կը թուէր ըլլար անփշրելի,—կենդանի նշանակ՝ ի յայտ բերուած զգացումներու անչափելի խորութեան և առնուած քայլերու անյողդողդ վճռականութեան։

Բոլոր ընկերվարականները, առանց երանդաւորման խտրականութեանց, բոլոր սէնտիկալիստները և մինչև անգամ անիշխանականները, կոմունիստ թէ ինտիվիդուալիստ, երբեմն այնքան անձնատուր առտնին վէճերու և ենթակայ՝ աշխարհահայեացքներու տեսական տարբերութիւններէ բղխող վանողական ուժերու, միացան այս մտքին շուրջ, կարծես ձուլեցան իրարու մէջ և գոյացուցին լեռնակուտակ զանգուածը իսկական խաղաղապաշներուն, որ բարձրացող ռազմատենչ ազաղակներուն զսպիչ թումբը ըլլալու է կոչուած։

Բայց պետութեանց քաղաքական գուրգուրալի նախահաշիւները իր անակնկալ կայծակներով ասղընտող այս նոր Զօրութեան ամենալուսաւոր և ամենաուժգին արտայայտութիւնը եղաւ, անկասկած, Միջազգային Ընկերվարական կազմակերպութեան (Internationale) այն բացառիկ Ընդհանուր Ժողովը, որ գումարուեցաւ նոյեմբեր 24 և 25-ի օրերը, Բազէլի մէջ (Զուիցերիա) մասնաւորապէս միջազգային աշխատաւորութեան, Նոր Զօրութեան, հեղինակաւոր և վերջին խօսքը արտասանելու համար ներկայ տագնապի մասին։

Եւ ո՜վ անիմանալի գաղտնիք պատմութեան։

Բազէլի կառավարական խորհուրդը քաղաքին մեծ Մայր Եկեղեցին տրամադրեց համաշխարհային ընկերվարութեան 500-է աւելի ներկայացուցիչներուն իբրև ժողովատեղի և մարդկային տարեգրութեանց մէջ առաջին անգամ ըլլալով տեսանք մենք այս առթիւ այն արտաքոյ կարգի սրտապնդող ու ոգեւորիչ երեւոյթը, որով հսկայ զանգակներու զողանջիւնին ու երգեհոններու թաւ խազերուն հետ, քրիստոնէական կրաւորական խաղաղասիրութեան յորդորներուն յատկացուած այն ամբիոններէն գոռացին յեղափոխական գործօն ռազմատենչութեան բարոզները։

Պատերազմ պատերազմին դէմ։

Բ. Շ.

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԳԻՐ

—

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԴԱՒԻՈՐԻԿԻ ՈՒ ՍԱՄՍՈՆ ԳԱՒԱՌԱՑ ՈՒ ՇՐՋԱԿԱՑԻՑ ԱՂԷՏԱԼԻ ԱՆՑԻՑ ՄԱՏՈՒՑԵԱԼ ԱՌԲԱՐՁ ՔՆՆԻՉՍ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ

Ցեարք պատուակա՛նք,

Հայաստան աշխարհի մէջ համայն քրիստոնեայքս երախտագիտական ջերմ զգացմամբ լի՝ կը փութամք ուրախութեամբ ողջունել Ձեր բարի գալուստը և ըսել „բարեաւ եկած էք“ այսր, ո՛վ թշուառ Հայաստանի յարգելի քննիչներ և պաշտպաններ, դուք որ Արևմուտքէն և Արևելքէն եկած էք Ձեր քրիստոնեայ խեղճ և հարստահարեալ եղբարց օգնութիւն մ՚ընելու, նոցա դարաւոր վիրաց սպեղանիք մը մատուցանելու և սրբելու անոնց աչաց դառն ու աղի արցունքը. նման այն Աստուածային մարդուն, որ Երիքովի ճանապարհի վրայ ինկած վիրաւորն տեսաւ և անտես չ՚ըրաւ Ի վաղուց անհամբեր կըսպասէինք Ձեզ. ահա եկած էք այժմ. կաղաչեմք ուրեմն դթացէք մեր թշուառ վիճակին, ի սեր այն Երկնային վարդապետին, որ մշտաչարչար մարդկութիւն ի խոր խաւարէն ի լոյս վերածնաւ, և իր փրկարար Ս. Խաչի պատանդանի ներքև իբր ընդ վահանաւ անթափանցելի համախմբեց և պահպանեց զայն։ Մեր յոյսը մեծ է ի ձեզ, ո՛վ ազնիւ որդիք Եւրոպեան աշխարհի, զի դուք էիք, որ վայրենի ազգեր քաղաքակրթեցիք, անկելոց պաշտպան և տկարաց զօրավիգ եղաք, խաւարելոց լոյս և քաղցելոց հաց մատակարարեցիք; միով բանիւ ի Ձեզ կը պարծի համայն մարդկութիւն, որոյ առջև հարթեցիք և կը հարթէք յառաջդիմութեան ճանապարհ աննախանձ շնորհելով նմա, որ ինչ բարի, ճշմարիտ և դեղեցիկ է։ Հայաստան, այս թշուառ Հայաստան միայն զուրկ մնացած է ձեր բարիքէն, նա այժմ արտասուալից ի ձեզ կը նայի և ձեռնատարած ի ձեզ կը պաղատի, որ ձեռն կարկառէք նմա և ազատէք զայն իր ոնկեալ վիճակէն, նորա վերքերն դարաւոր են, յոտից ցգլուխ չիք առողջութիւն և ուստեք օգնութիւն, բաց յԱստուծոյ և ի Ձենջ։ Կը հաւատամքը յԱստուած և կը յուսամք Ձեր մարդասիրական գթութեան, ուստի այս զգացմամբ կը բանամք Ձեր առջև մեր այդ վերքերն և յանձնելով զՁեզ Աստուծոյ և Ձեր խղճին, կը խնդրեմք հարկաւոր սպեղանիքն։ Սկսեմք ուրեմն։ Եւրոպայի մեծազօր պետութիւնք, որոց հզոր բազկաց մէջ կը հոլովի աշխարհի բախտն, վերջին Ռուսա-թիւրք պատերազմն յետոյ երբ վեհաժողով մը կազմեցին ի Պերլին, կնքեալ դաշնագրին մէջ հաճեցան թշուառ Հայաստանի համար ևս 61-րդ յոդուածն շնորհել, որ է հետևեալն.

„Բարձրագոյն Դուռն առանց յապաղելոյ այլևս կը խոստանայ հայեր քիւրդերէն և չէրքէզներէն պաշտպանել և պէտք եղած տեղեր բարենորոգումներ մտցնել, որուն պիտի հսկեն վեց մեծ տէրութիւնք“ ևն ևն։

Սակայն ցաւալի է ըսել, որ ո՛չ միայն անոր մի կէտն չգործադրուեցաւ ցայսօր, այլ և Թիւրքիան կարծես նոր քունէ մը սթափելով, ուրիշ քաղաքականութիւն մը ձեռք առաւ հայ տարրն օրինական ձևի ներքև իսպառ անհետ ընելու, որոց ապացոյցներն են հետևեալ հարստահարութիւնք.

Ա. Ցատանորդ ծախելու կերպ և զայն գնող միւլթէզիմի ապօրէն գրկանքներ։

Բ. Տրոց յաւելումն և անոնց ապօրէն գանձումն։

Գ. Քրդական հարստահարութիւնք և տիրած անապահովութիւնք։

Դ. Դատարանաց զեղծումներն և կաշառաբեկութիւնք։

Ե. Վաշխառութեան յոռի դրութիւն։

Զ. Հայեր կրօնափոխ ընելու ներքին գաղափարներ։

Է. Բռնի առևանգմունք կանանց և աղջկանց։

Ը. Խրշայի դրութիւն։

Թ. Խաֆիրութեան դրութիւն։

Ժ. Նեիրական վայրաց սրբապղծութիւն և յառաջադիմութեան արգելքներ։

ԺԱ. Բանտերու յոռի վիճակն և անդ գործուած եղեռնագործութիւնք։

ԺԲ. Դալուորիկի և Պասնոյ վերջին աղէտալի դէպքերն և ասոնց ծագման պատճառք։

ԺԳ. Բռնի մազապթայ հաւաքելու և շնորհակալեաց ուղերձ յղել տալու դրութիւն։

Բացատրեմք Ա. Յօդուածն

Տասանորդ կ'ըսի և խոտի տասանին մէկը կառավարութեան տալ, սակայն այս տուրքը վերջի պատերազմէն յետոյ եօթնի իջած է և կը վճռուի այսպէս.—Հնձոց ժամանակ իւրաքանչիւր կեդրոնի Վարչական Ժողովն, նախագահութեամբ վալիի, միւթէսարիֆի և գայմագամի, ածուրդի կը դնէ ամեն մէկ գիւղի աշարն, ասոր վճռման մէջ մեծ շահեր ունին յիշեալ ժողովոյ անդամք և նախագահներ, որոնք թէև Օրինաց տրամադրութեամբ չեն կրնար գնել իրենց անունով, սակայն իրենց ազգականաց անունով կը գնեն, որոնց հետ մեծ կապ և առնչութիւն ունին շահու տեսակէտներով։ Այս աշար գնողներ, որ միւլթէզիմ կ'ըսին ըստ տեղւոյն կամ հարուստ խիւրքեր են և կամ քիւրդ պէյեր և աղաներ։ Ասոնք գիւղեր կ'իջնեն եսթէն ութ 10—15 մարդերով և ձիերով և ամբուռն զօրութեամբ, վասն զի ի՞նչ երկիւղ ունին, երբ կեդրոնի մէջ զօրաւոր պաշտպաններ ունին, ուստի ձրի կը պահանջեն բնակարան, անկողին, ուտելիք՝ որ է միշտ և անխափան իւղեղէն, մսեղէն, կաթնեղէն և ըն համադամ խորտիկներ, օրն երեք անգամ, իսկ ձիոց դարի, խոտ, յարդ ամառատուութեամբ, նաև կը գործածեն իրենց և ձիոց համար դիւղէն երեք-չորս ծառաներ ձրիապէս, նմանապէս ձրի կը ստանան ամբար արմտեաց համար։ Միւլթէզիմը ոչ միայն տէր է աշարին, այլ և ամբողջ գիւղին, ուստի իր ամեն հրամաններ անխիներ կը կատարուին. եթէ մինն առ աղքատութեան չկարենայ մի հրաման կատարել, չարաչար ծեծելէ և օրէնք, կրօնք ու խաչ հայհոյելէ յետոյ, ամաններ գլխուն կը զարնէ և կը պահանջէ նոր կեբակուրներ, սակիպ զատ անոր կալը անչափել կը թողու, այնչափ մինչև անձրևի տակ փճանայ. և կամ իրենց նշանով նշանակուած կալեր գիշեր կամ ցորեկ գաղտնի կ'աւերեն և տիրոջ — գողցեր ես ըսելով մեծամեծ տուգանքի կ'ենթարկեն. թէպէտ ինչպէս վերը բսինք 7-էն 1 է տասանորդ, սակայն միւլթէզիմի կամայ կը մնայ, մինչև չորս մէկէն ալ կ'առնեն, տասանորդին գլուխ գլուխ կ'առնեն, մինչ խեղճ ժողովրդեան փայտով կը սրբեն. կալը չափելէ վերջ մէկ մէկ քիլ կալագլուխ կ'առնեն, իբրև իրաւունք, ոչ միայն իրենց, այլ և հետերնին եկող մարդոց առանձին-առանձին, այնպէս որ խեղճ գիւղացւոյն հետ կիսովին կը բաժնեն. այս արմտիքն ալ ամբարելէ վերջ մինչև կեդրոն ալ ձրի փոխադրել կուտան։ Այսչափ արմտեաց տասանորդի համար։ Գալով խոտի տասանորդին, ճիշտ արմտեաց տասանորդի ձևով կառնու, թէպէտ օրէնք է միայն որ ժողովուրդ սեփական մարդի մէջ քաղած խոտի տասանորդ տայ իսկական տեսակէն. սակայն միւլթէզիմն հակառակ օրինաց մարդէ դուրս քաղուած փուշերուն ևս տասանորդ կ'առնէ, զայն դրամի վերածելով այսպէս.—եթէ մի բարդ, որ երեսուն խուրձ է, ծախի 30 դրշ.ով, միւլթէզիմն բարդը 100—200-ի հաշուով կառնու բռնութեամբ, և ըստ տեղւոյն մինչև 150—200 դրշ։ Արմտեաց և խոտի տասանորդէն զատ բանջարանոցի տասանորդն ևս կառնու, որ օրէնք չէ, վասն զի փոքրիկ ածուի է, ասոր տասանորդի արժէքի որ դրամ, այնքան բարձր գնով մը կ'որոշէ, որ խեղճ դիւղացին կրոտիպ ի ըսել թէ բանջարն հողով մէկ տեղ քեզ ըլլայ, չ'ազատիր և պահանջեալ դրամն պիտի տայ, նոյնիսկ եթէ այդ պատճառաւ բանջար ձեան տակ մնայ ու փճանայ, միւլթէզիմը իր պահանջը կառնէ։ Նոյն բանն կը լինի և այգիներու համար։ Այս ամեն դրկանքներ, թէև օրինաց հակառակ են և ժողովուրդը կը բողոքէ կառավարութեան, սակայն դատաւորներ պաշտպան և շահեկից են միւլթէզիմին, ուստի և անելելի կը մնայ բողոքն և խեղճ գիւղացին ձեռք ծոց դրած յուսահատ տուն կը դառնայ։

Բ. Տրոց յաւելումն և անոցա ապօրէն գանձումն

Վերջի պատերազմէն յետոյ ժողովրդոց տուրքեր, որք են հետևեալք, խիստ աւելցան.

1. Գլխահարկ, 2. Հողային տուրք, 3. Թէմեթու, 4. Ոչխարի տուրք, 5. Ինթիգալ, 6. Բնակարանաց տուրք, 7. Կրթական տուրք, 8. Ճանապարհաց և կամուրջներու տուրք, 9. Ննջեցելոց գոյից տուրք, 10. Տասանորդի տուրք, զոր վերը բացատրեցինք։

Գլխահարկ կ'ըսի այն տուրքը, զոր հպատակը պարտաւոր է վճարել կառավարութեան ծախուց համար. ըստ օրինի այդ տուրքը 15 տարեկան վեր եղողէն պէտք է պահանջի, սակայն հակառակ օրինաց մէկ տարեկանէն սկսեալ կառնի, թէև այս տուրքը յառաջ 20 դրշ. էր, սակայն պատերազմէն յետոյ 40 դրշ. ողջ դրամի բարձրացուց։

Հողային տուրք կ'ըսի, գիւղացւոյն սեպական արտի և մարգի տուրք։ Եթէ գիւղացին իր արտը կամ մարգը վաճառելու ըլլայ, հազիւ 200—400 դրշ. արժէ, կառավարութիւն իւրաքանչիւրէն 8000—10.000 դրշ. արժէք դրած և ըստ այնմ ալ տուրք կը պահանջէ, այնպէս որ ժողովուրդ երեք տարին անգամ մը իր հողը կառավարութենէն գնած կ'ըլլայ, վասն զի հողի տուրքը տալէ զկնի, անոր արդեանց տուրքն ալ կուտայ տասանորդ անուամբ, ինչպէս վերը բացատրեցինք։

Թէմեթիւ կ'ըսի վաճառականական տուրք, զոր քաղաքի վաճառականներէն ինչպէս որ կառնէ, այնպէս ալ երկրագործէն կը պահանջէ և կառնէ մարդ գլուխ 10-է մինչև 200 դրշ., մինչդեռ օրէնք չի ներեր, որ երկրագործէն կամ մշակէն առնուի, քանի որ իր վաստակի տասանորդ արդէն կուտայ։

Ոչխարի տուրք, որ յառաջ 60 փարա էր, այժմ 3 և կէս ողջ դրամի բարձրացած է, որ կ'ընէ 1 ֆրանկ, եթէ մէկ տարի մը գիւղ մը ամբողջ ոչխար հազար հատ լինի, հետևեալ տարին պաշտօնեան եթէ զայն ալ չի գտնէ, անպատճառ նոյն չափով կը պահանջէ, ժողովուրդը կը բողոքէ, թէ կամ քիւրդերէն գողցած կամ վաճառուած է տերու-

թեան տուրք տալու համար և կամ սատկած են, սակայն չ'ընդունիր և բռնի նոյն հազարի հաշուով կառնէ, այնպէս որ գիւղ կայ, որ վերստին իր ոչխար կառավարութենէն գնած կը լինի. հայոց համար այս ճնշումներ կ'ըլլան ապօրինի, մինչ քիւրդեր, որք հօտերով ոչխար ունին 1000-էն 100 ոչխարի հազիւ տուրք կուտան և կառավարութիւնը ետևէ չ'ըլլար, այսպէս ալ տասանորդական եայլն տրոց համար շնորհումներ կը վայելեն։

Ինթիգալի տուրք կ'ըսուի, յետ մահուան կալուածատիրոջ հողերն ժառանգորդաց վրայ դարձնելու տուրքն, որ 1000-ին 50 ղրշ. կը վճարուի, և եթէ խեղճ ժառանգորդը առ աղքատութեան չկարենայ որոշեալ ատեն այդ դարձնելու գործողութիւնն ընել, մեծ տուգանաց կ'ենթարկուի։

Բնակարանաց տուրք կ'ըսուի, տանց և անասնոց ելն յատկացեալ դեղերու տուրք. այս տուներ գեանափոր խրճիթներ են, որք եթէ վաճառուին, հազիւ 100—300 ղրշ. արժեն, մինչդեռ կառավարութիւնը բարձր գին դնելով աւելի կառնէ։

Կրթական տուրք կ'ըսուի իսլամ և ոչ-իսլամ դպրոցներու յատկացեալ տուրք, սակայն կը գանձուի և կը յատկանայ միայն իսլամ դպրոցաց։

Ճանապարհաց և կամուրջներու տուրք մի ևս վերջին տարիներս կառավարութիւն հաստատած է, որով մարդ գլուխ 12 ղրշ. ողջ դրամ կառնէ, սակայն ընդհակառակն ո՛չ ճանապարհ կը շինուի, ոչ կամուրջ։

Ննջեցելոց գոյից տուրք, երբ տան մը մէջ մէկը մեռնի, դատաւոր նոյն տան ստացուածքներ և գոյքեր դրամի վերածելով խիստ բարձր արժէք կը դնէ անոնց և տուրք կառնէ, մինչդեռ ըստ օրինի, երբ ժառանգորդաց մէջ վէճ ծագի և իրեն դիմեն, այն ատեն միայն պէտք է միջամտէ և օրինական գործողութիւնները կատարէ։

Գալով այս տրոց գանձման եղանակին, այս ևս հետևեալն է։ Կառավարութիւն յատուկ ոստիկաններ ունի, զորս կը գործածէ տրոց հաւաքման։ Ամբողջ տարին ասոնք գիւղերու մէջ փոփոխակի կը շրջին ձիով, իրենց ուտելիք պէտք է լինի մսեղէն, իւղեղէն, կաթնեղէն և համադամ խորտիկներ, ձիոց ալ գարի, խոտ, յարդ և մէկ ոստիկանի ծառայութեան համար ալ երկու մարդ, մէկն իրեն և միւսն ձիուն. հակառակ օրինաց այս բոլոր բաներ ձրի են. ասոնց ժողովրդեան հասուցած չարիքներ անտանելի են, երբ գիւղի մը մէջ մուտ կը գործեն իբրև մեծ բռնաւոր կը վարուին ժողովրդեան հետ, մինչ կէս գիշեր տնէ ի տուն հաւաքելով մարդիկ կը բանտարկեն իրենց իշևանի ախոռի մէջ, ապա մէկիկ մէկիկ կանչելով տուրք տուողներ ծեծելով կ'արձակէ, իսկ մնացեալ անկարողներն շուանով մը սեան կը կապէ պինդ և մերկացնելով կամ հանդերձներով կժով ջուր կը լեցնէ գլխուն և կը ծեծէ, ճրագ գլխու վրայ վառ կը դնէ, պահանջելով որ անչարժ մնայ մինչև առաւօտ. և եթէ խեղճը յոգնութենէ և կամ քնէ նեղուած քնանայ և ճրագը վար իյնայ 2—3 արծաթի մեճիտ տուգանք տալէ զկնի կրկին և կրկին կը ծեծուի։ Ոմանց ալ անասնոց և կենդանեաց աղբիրով բերանին և երեսին կ'օծեն, այլ և այլ չարչարանքներ կուտան, մինչև որ մարդ կը պարտաւորի կամ իր անասունը և կամ իր ստացուածքը կիսագնով 100 ղրշ.-ի բանը 20—30 ղրշ.-ի վաճառել այն մատվաճառին, զոր հետերին կը տանեն շահակից լինելու համար, իսկ եթէ անկարող լինի տուրք վճարելու, առիւգոյէ անասնոյ, անոր տունը կը մտնէ և հոն գտնուած հողէ ամանները թէ լեցուն կամ դատարկ ամբողջ կը ջարդէ հազար ու մէկ հայհոյութիւններով ու եթէ պարտատիրոջ կինը գեղանի լինի, կ'առաջարկէ իր չար կիրքը յագեցնել, եթէ կինը չգիջանի և խնդիրն յայտնուի, գինքը արդարացնելու համար քաղաքական ամբաստանութիւն մը կը յերիւրէ այդ տան վրայ և բանտարկել կուտայ տան տէրը իր քաղաքական յանցաւոր։ Ամեն օր գիւղերու մէջ ոստիկաններ անպակաս են. մին կ'ելնէ և միւսն անոր ետևէն կը մտնէ, այնպէս որ չեն թողուր շունչ առնելու. բոլորի վարմունքն ալ այս կերպ է և մինչև որ իրենց համար 3—4 մեճիտ մարդ գլուխ կաշառք չ'առնեն չեն հեռանար. ժողովուրդը այսչափ ծանր պարտուց ներքև ճնշելով գիւղ գլուխ 30—40—50 տուն պանդխտած են ընտանեօք աստանդ, ասոնց մնացեալ կառավարական պարտուց ապառիկներն ալ մնացեալ ներկայ դիւղացիներէն կը պահանջէ անիրաւութեամբ և կառնէ, որպէս զի դոքա ևս նոցա վիճակին հասնելով ոչնչանան իսպառ, ահաւասիկ տրոց յաւելումնք և նոցա գանձման ապօրէն միջոցներ, որ ժողովուրդը յետին աղքատութեան ենթարկած է։

Գ. Քրդաց հարստահարութիւնք և տիրած անապահովութիւնք

Վերջի պատերազմէն յետոյ օսմ. կառավարութիւն հակառակ 61-րդ յօդուածոյն Վեհաժողովի՝ քիւրդեր և չերքեզներ զինեց և հրահանգեց, որ միշտ հայերը հարստահարեն, ուստի սոքա դիշերներ կը ցրուին հայոց գիւղերը ոչ խար և դուար հօտերով կը յափշտակեն, և եթէ գիւղացիք իրենց աւարի ետևէն երթան հրայանով կրպանուին, և որովհետև այս քիւրդ աշիրէթներու ապրուստը ամբողջովին հայոց վրայ է, անոր համար ցորեկ ատեն կուգան բան մը կը պահանջեն, կամ ցորեան կամ անասուն ելն, եթէ խեղճը առ աղքատութեան չկարողանայ գոհացնել զինքը, գիշեր մարագ, խոտի դեզ և կամ ցորենի բարդոցներ կ'այրէ, այս երկիւղէն թշուառ ժողովուրդը կը պարտաւորի իր ամեն պահանջք լեցնել։ Զոր օրինակ կալի ժամանակ ամեն մէկ քիւրդ մի քանի թեռ կը բերէ կը ձգէ մէկու մը կալ, գիւղացին պարտաւոր է զայն ցորենով լեցնել և իր անասնոց վրայ բեռցնելով նորա տունը տանի։ Ասոնց աւազակութեան պատճառաւ երկրին մէջ երթևեկութիւնք և փոխադրութիւնք խպառ դադրած են, որով և վաճառականութիւնը մեծապէս վնասուած է։ Վերջին տարիներս այս աշիրաթէն Համիդիէ անունով հեծելագնդեր պատրաստեց, որ ստիճան մը ևս խրախուսեցան այս անկարգութեան մէջ. զի եթէ ցարդ անկանոն կերպով կը հարստահարէին, հիմա իբրև առանձնաշնորհեալ զօրական աներկիւղ ամեն չարիք կը գործեն և կը մնան անպատիժ. եթէ կառավարութեան բաղքի, կը պատասխանէ թէ զինուորականի կը պատկանի, և եթէ վերջնոյն դիմէ, կը պատժուի իբրև տէրութեան զօրք գող անանցող մէկը, և այս պատճառաւ ոչ ոք չի համարձակիր բողոք ընելու։ Սոքա կառավարութեան կեդրոն կ'երթևեկեն համարձակ զինեալ և կառավարութիւնք դիտողութիւն չի ըներ, մինչ հայի վրայ եթէ գաշոյն մը տեսնէ, զայն կը բանտարկէ իբրև քաղաքական յանցաւոր, ահա ժողովրդեան հարստահարութեան մի միջոցն ալ։

Դ. Դատարանաց զեղծումներ և կաշառաբեկութիւնք

Օսմանեան դատարանք հայու վերաբերեալ և ո՛չ մի դատ արդարութեամբ չեն վճռեր, այլ ստոր պաշտօնեայն սկսեալ մինչև ամենամեծն կաշառքով գործ կը տեսնան և արդա-

բութիւնը անոր կը զոհեն. հանրածանօթ սճրագործ քիւրդ աղա մը, եթէ երբէք բանտարկուի, որա ազգականք բռնի շնորհակալեաց մազպաթայ մը կառնեն հայերէն և աղան արդարանալով բանտէն կը հանուի։ Շատ անգամ ալ կառավարութիւն մեծամեծ գումարներ կաշառք առնելով զայն կը որբագործէ կարձակէ, արձակուող քիւրդը իր վնասներ հարիւրապատիկը կը դանձէ բռնութեամբ գրացի հայերէն. ահա մի տեսակ վաճառականութիւն ընդ մէջ կառավարութեան և քրդաց։ Դատարանք քիւրդի վկայութիւն հայու դէմ անմիջապէս կ'ընդունին, իսկ հայի վկայութիւն անոտի պատճառով կը մերժեն և քիւրդը անմեղ կը հռչակուի, այս կերպով որչափ որդար դատեր կորսնցուցած են հայեր, ահա այս պատճառաւ սպանուած, զրկուած, կողոպտուած հայն յուսահատ չի դիմեր կառավարութեան, իր ցաւոց մէջ խեղդուած կ'ոչնչանայ։

Ե. Վաշխառութեան յոռի դրութիւն

Ինչպէս վերը յայտնեցինք, ժողովուրդը ծանր ծանր հարկերու և հարստահարութեանց ներքև ճնշուած, իր տուրքերը վճարելու անկարող, կը պարտաւորի թիւրք կամ քիւրդ աղաներու դիմել և որոշեալ գումար պարտք առնել պայմանաւ, որ ցորչափ չէ կրցած վճարել, պիտի պարտաւորի այդ գումարին իբր տոկոս իր ցանած հացարոյսերու կէսը անոր հետ բաժնել, ոմանք ալ յիշեալներէն 100-ին տարին 200 ղրշ. տոկոսով պարտք կ'ընեն՝ տուրքեր տալու համար, այս պարտքը մի քանի տարի վերջ բաղադրելով, որչափ կը շատնայ, որ խեղճը կը պարտաւորի իր անասուններ, արտեր մարգեր ևն անոնց ձեռք թողուլ և պանդխտիլ։ Այս դրութեամբ հայեր մեծաւ մասամբ իրենց հողերէն զրկուած են։

Զ. Կրօնափոխութեան ներքին գաղափարներ

Օսմանեան կառավարութիւն թէև Եւրոպիոյ հռչակած է կրօնից ազատութիւն, սակայն ի ներքուստ զանազան միջոցներով հայեր կրօնափոխութեան կը բռնադատի։ Զոր օրինակ, երբ խեղճը չկարենայ այսչափ ծանր տուրքեր վճարել, կ'առաջարկուի իրենց իսլամ լինել, և այս դերութենէ ազատուիլ, այսպէս թէև սոյն տուրքերէն ազատուելու և թէ իրենց ընտանեաց կեանքն ու ստացուածքը ապահովելու յուսով որչափ խեղճ հայեր կը պարտաւորին ամեն ժամանակ իսլամութեան գիրկը նետուիլ յակամայ։

Է. Բռնի առևանգմունք

Ինչպէս հայն տէր չէ իր գոյից և ստացուածոց, այնպէս ալ տէր չէ իր պատուոյն, վասն զի մոլեռանդ իսլամն և պիղծ քիւրդն ուր որ գեղեցիկ կին մը կամ աղջիկ մը տեսանեն, գիշեր և կամ ցորեկ զինեալ ընկերներով անոր գտնուած տեղւոյն վրայ կը յարձակուին և բռնի կը յափշտակեն զայն ու լեռներ ամիսներով պտտցնելէ և իրենց չար կիրքը յագեցնելէ ետքը, անզօր կինը յուսահատ ամազատութեան միջոցներէ, իսլամութիւն կ'ընդունի, և որչափ է այսպիսի տարաբախտ զոհերու թիւն, քանի այս պատճառաւ զանոնք պաշտպանողներու սպանութիւնը, սակայն կառավարութեան յայտնի պաշտպանութեամբը վարագուրին ներքև կը ծածկուին։

Ը. Խշլայի դրութիւն

Քրդաց հարստահարութեան մէկ միջոցն ալ ձմեռներ իրենց ունեցած ոչխարներ, տաւարներ, ձիեր ևն հայոց գիւղեր մինչև գարուն պահելու համար ցրելն է, եթէ ասոնցմէ մին սատկի, գարնան անոր փոխարէն երկու և երեք կառնէ ի պատիժ, իբր տուգանք, ուստի խեղճ հայն երկիւղէն իր անասնոց բերնէն դարման կը կտրէ և զանոնք կը բուծանէ. որով շատ անգամ իր անասուններ անօթութենէ կը սատկին, բայց յաստի պահեած ոչխարաց տուրքն ալ իրենց վրայ կը մնայ, վասն զի ոչխարահամար պաշտօնեան քիւրդը պաշտպանած լինելու համար կ'առարկէ, թէ տեսած տեղս կը գրեմ։

Թ. Խաֆիրութեան դրութիւն

Խաֆիր կը նշանակէ գերի. շատ տեղեր այս դրութիւն կը շարունակուի ցայսօր, գերի եղող հայը իր այսչափ ծանր տուրքեր տալէ զկնի պարտաւոր է նաև իր աղան և գոհացնել իր ցորենէն, իւղէն, մեղրէն, ոչխարէն, տաւարէն և հանդերձէն բաժին հանելով և միանգամայն անոր տնական ամեն ծառայութիւններ պարտաւոր է երթալ կատարել. հայեր կան, որոնք երեքէն տան աղաներ ունին, խեղճերը որը շահին և իրենց տէր պահեն, կառավարութի՞ւնը թէ զասնք. եթէ դժբախտաբար չկարենայ իր մէկ ազգի պահանջքը լրացնել, սա բարկանալով կը հանէ զինքն իր սեփականութենէն և իբրև անասուն կը վաճառէ ուրիշ ազգի մը անկէ որոշեալ մեծ գումար մը ստանալով. ահա սամանեան հոդի մէջ դերեվաճառութեան մի ցաւալի դրութիւն։

Ժ. Նեիրական վայրաց սրբապղծութիւն և յառաջդիմութեան արգելքներ

Օսմանեան կառավարութիւնը հայ ազգը նիւթական կերպ կերպ ճնշումներով հարստահարելէ զկնի, պատերազմէն ասդին ձեռք զարկած է բարոյական կողմն ալ նուաճելու, զոր օրինակ հայ գիւղերու և հին սրբավայրերու մէջ գտնուած հնաշէն եկեղեցիներէն շատերը գոմի, մարդի վերածած և սրբապղծած է, դերեզմանատուներս ալ քանդելով պարտիզի կամ ուրիշ շինութեանց յատկացուցած է։ Հայոց կրօնական եռանդը մարելու համար նոր եկեղեցի շինելու հրաման չի տար, ու եթէ գիւղ մը չէզէ իր հին եկեղեցին վերանորոգել, պէտք է որ Բարձրագոյն Դռնէն կայսերական հրամարտակ հանել տայ, որ երկար տարիներու և մեծ ծախուց կը կարօտի, եթէ երբէք յաջողի ալ։ Նոյն սեղմումը կայ նաև վարժարանաց մասին, որոյ պատճառաւ երկիրն խիստ յետադիմութեան մէջ կը գտնուի արհեստի, կրթութեան և երկրագործութեան կողմանէ, եթէ տեղ տեղ ալ մի քանի դպրոցներ գտնուին, դարձեալ եւրոպացւոց շնորհիւն է, փոխանակ կրթութիւնն քաջալերելու, դասատուներ անոտի պատճառաւ կ'աքսորէ՝ իբր քաղաքական յանցաւոր և միւս կողմանէ բարբարոսութիւնն կը զօրացնէ. այսպիսի կառավարութենէ մը ի՞նչ կարելի է յուսալ։

ԺԱ. Բանտերու վիճակն և հոն գործուած եղեռնագործութիւնք

Օսմանեան կառավարութեան բանտերն մութ, խոնաւ ապականեալ են և կը ծառայեն ո՛չ իբր պատժավայր, այլ իբր սպանդարան, ուր խեղճ զոհեր հազար ու մէկ չարչարանքով կը փճանան, հայ բանտարկելոց համար չկան այն մանաւորը շնորհներ, զոր կը գտնեն իսլամք, վասն զի ասոնց տեղեր լայն և լաւ են, մինչ հայերուն ապականեալ և նեղ,

այնպէս որ 2—3 մարդու բաւելիք սենեակ մը 15—20-ի կը յատկացնէ. բնական կարիք լեցնելու համար խեղճ հայ բանտարկեալ պէտք է որ օր երկու անգամ կաշուք տայ, բանտարկեալ պատանիներ կը յանձնուին լկտի, վաւաշտ և պիղծ զապթիանեներուն, որոնք իրենց չար կիրքը յագեցնելէ զկնի կը բռնադատեն կրօնափոխ լինել, որ ազատուին, զամանս ալ հրաշէկ շամփուրով կը խարեն, ագցաներ մարմիններին կը կտրատեն և այնպիսի ահռելի պատիժներ կուտան, որպէս զի ստիպուին մի քանի անմեղներ ցոյց տալ իբր ընկերութեան անդամ, զորս անմիջապէս կը ձերբակալեն։ Վերջին ժամանակ բոլորն ալ այս կերպով և կամ քրդաց, թրքաց զրպարտութեամբ բռնուած են. ասոնց կարգէն է Մշոյ առաջնորդ Ներսէս վարդապետ Խարախանեան, որոյ յանցանքն եղած է հարստահարութեանց դէմ Ազգ. Պատրիարքարանին և կառավարութեանց բողոքելն, որոյ պատճառաւ Բաղէշոյ կուսակալն թշնամացաւ հետ և իբր բաղաքական յանցաւոր զրպարտել տալով բանտարկեց երկու տարիէ ի վեր. և որովհետև կառավարութիւն պարգև, պաշտօն և պատուանշան կը խոստանար այն քիւրդին կամ թիւրքին, որ կարենար հայոց դաղտնիք մը երևան հանել, ուստի այս խոստումով և հրամանով ամեն մահմեդական բացարձակ լրտես կարգուեցաւ հայոց վրայ, և սկսեցին սուտ զրպարտութիւններ կապել այսինչ կամ այնինչ հայի վրայ և զայն կառավարութեան յայտնելով իբր քաղաքական յանցաւոր բանտարկել։ Ասոնց կարգէն է Բաղէշոյ արդի մէկմուպշին, որ 25 անմեղ հայեր զրպարտեց և Բաղէշ բանտարկելէն զկնի, պատուանշան ստացաւ տերութենէն. անարժան պաշտօնէից համար ահա վարձատրութիւն ստանալու ասպարէզ։ Բաղէշոյ կուսակալն այս պատերազմէն օրշափ սգուտ քաղէց քանի տարեան շրջանի մէջ, վասն զի ուր որ քիչ շատ կարողութիւն ունեցող մէկը տեսաւ հայ, զայն իբր քաղաքական յանցաւոր բանտարկել տուաւ մեծամեծ դուժարներ առնելով անոնցմէ, որոց կարգէն են Բաղէշոյ արդի առաջնակարգ ազգայինք, որոնք իր զեղծմանց դէմ բողոքած էին նախապէս։ Շատ անգամ ալ երբ կուզեն մին բանտարկել, յանկարծ փ՝ լիս նորա տունը կը պաշարէ և կը խուզարկէ և քովէն ինասակար թուղթ մը հոն ձգելով կը ձերբակալէ, և վերջապէս այն աստիճան քաղաքեալ և մաղած են զժողովուրդ, որ հարուստ և քիչ շատ բանգէտ մէկն չէ մնացեր մէջերնին, որին որ կամքն ու պահանջքը չյարգի, Ընկերութեան անդամ ես ըսելով ձերբակալել կուտայ առանց քննութեան։

ԺԲ. Դալլորիկի և Սասնոյ վերջին աղէտալի դէպքերն և ասոնց ծագման պատճառներն

Թրքաց, քրդաց ու կառավարութեան խեղճ հայոց գլուխ հասուցած հարստահարութիւնք և բարբարոսութիւնք իրենց ծայրայեղութեան հասած էին արդէն, և ժողովուրդն փրկութենէ անյոյս կը տատանէր ընդ մէջ կենաց և մահու, կեանքն իրեն անտանելի դարձած էր այլ ևս, պահ մի յառաջ կուզեր մեռնիլ և ազատիլ այս դժոխք աշխարհէն, քան թէ ապրիլ սոյն անգութ բռնութեանց և տանջանաց ներքև։ Որշափ բողոքեց, լսելի չ՝եղաւ իր տկար ձայն և խեղդուեցաւ իր մէջ. մահմեդականութիւն իբրև դարևոր ոսոխ քրիստոնէութեան, միտք դրած էր հայութիւն խպառ ջնջելու, ուստի և հրաման ըրաւ աշիրէթ քրդաց, որ հայոց ստացուածքն և անասունքն յափշտակեն, դարերէ ի վեր հայոց արիւնը տղրուկի նման ծծող և անով մնանող քիւրդեր այսպիսի բարեդէպ առթի կը սպասէին, ուստի անցեալ գարնան երբ ըստ սովորութեան լեռներ ելան, սկսեցին յայտնի հարձակ հայոց ոչխար, դուարներ յափշտակել և պահպաններն սպանել. առաջին յաղթութենէ քաջալերեալ՝ երկրորդ և երրորդ անգամ ալ նոյնը բրին և մարդիկ սպանեցին. խեղճ հայեր պարտաւորեցան ինքնապաշտպանութեան դիմել և երբ քիւրդերէն ևս քանի մը հատ ինկան, կառավարութիւնը հայերն ապստամբած են ըսելով պատերազմ հրատարակեց և անմիջապէս յատուկ պաշտօնեաներ ղրկեց աշիրէթներուն, շէհերու և իլչիներու քով, ասոնք ալ քիւրդ ցեղերու մէջ լեցուեցան և կայսերական հրաման հաղորդելով նոցա յորդորեցին և գրդռեցին ի պատերազմ ընդդէմ հայոց, խոստանալով անոնց հայոց կանայք, աղջկունք, ինչքն ու անասունք. միւս կողմէն ալ Երիզայէն, Կարինէն, Քարբերդէն, Տիգրանակերտէն, Վանէն, Սղերդէն, Բաղէշէն, Կէնճէն, Մուշէն ևն ևն զանազան տեղերէ անթիւ զօրքեր եկան հասան և քրդաց հետ ահագին շղթայ մը կազմելով իբր պատնէշ Դալլորիկ և Սասուն գաւառներն և շրջակայք ու Մշոյ ետև գտնուող հայ գիւղեր պաշարեցին. իսկզբան անոյ թրքական զօրքեր քրդական տարազով կը պատերազմէին ու քրդաց կ՝օգնէին զենքի ու պաշարի կողմանէ, բայց երբ կռիւն երկարեցաւ ու հայերն ինքզինքնին պաշտպանեցին, սուլթանի բացարձակ հրամանն հասաւ, թէ „կտրեցէք հայերն“։ Ուստի յայտնապէս օսմանեան բանակն յառաջ քալեց ի կռիւ, թնդանոթներ և հրացաններ սկսեցին որոտալ։ Հայերն պաշարող զինուորական և քրդական շղթան զանոնք կոտորելով յառաջ կերթար, զի դարերէ ի վեր հարստահարեալ հայն ինչպէ՞ս կրնար տոկալ քրդական այս ահագին բազմութեան և մանաւանդ կանոնաւոր զօրաց յարձակման առջև, այսպէս բաւական օրեր պատերազմն շարունակելով, օսմանցիք յաղթութիւն տարին հայոց վրայ և զանոնք կոտորեցին. մնացեալք սկսան ցիրուցան փախչիլ անտառներ ու ձորեր. բայց ինչպէ՞ս ազատէին։ Ուստի էին որ կամաւ անձնատուր եղան խմբովին, յուսալով գէթ իրենց կեանք ազատած լինիլ, և էին որ բռնելով զօրաց բանակ բերուեցան։ Այս կերպով օսմ. զօրքեր և աշիրէթներ այդ գաւառներու հայեր կոտորեցին, գիւղերն աւերեցին, տուների մէջ գտնուած ծերունիներով, հիւանդներով և մանուկներով այրեցին և անոնց ինչքն ու ստացուածք և անասուն ամբողջ աւարեցին։ Թաղունք այս անմեղ զօրքեր լերանց և հովտաց մէջ և աւերակաց ու մոխրաց կոյտերու ներքև և դառնանք պահ մի հանդիստես լինել օսմանեան բանակի մէջ գտնուած կանանց և աղջիկներու, երիտասարդաց և մանկանց գլուխ հասած բարբարոսական տեսարաններու և միառմի պատմել զանոնք ի լուր եւրոպական ազնիւ և ազատասէր ազգաց։

1. Մարդկութեան անձնատուր եղող խումբ մը մարդոց իրենց գերեզմանի խրամը պեղել տալէ զկնի՝ սուինի հարուածներով չարաչար մահուամբ կը սպանեն ու կը լեցնեն խրամներու մէջ. ոմանք չկրնալով տոկալ այս ահռելի և անգութ սպանութեան, զիրենք կենդանւոյն նոյն խրամի մէջ կը ձգէին և հողի ներքև իրենց շունչը կ՝արձակէին։

2. Խումբ մը մարդոց և քահանայից մարմիններ ողջ ողջ կը քերթէին ու մաս մաս յօշոտելով կը սպանէին։

3. Բաւական թուով երիտասարդներ գետին պառկեցնելով և անոնց գլուխներն երկու գերանի մէջ սեղմելով, կը սկսէին ասոնց մարմինը սուինով ծակծկել և այնչափ չարչարել, մինչև որ մեռնին։

4. Ցրի կանայք չարաչար լլկելէ զկնի, կը մերկացնէին և կարգաւ շարելով ու որովայնին ճեղքելով մանուկներն սուինի

ծայրն կը բարձրացնէին ի տես արեան մէջ թաւալող տարաբախտ մարդ, որ դեռ աչքերնին չփակած կը տեսնէին իրենց զաւակներ այդ տսկալի վախճանին մէջ։

5. Բազմաթիւ կանայք և աղջիկներ փոփոխակի և օրերով Ակելէ ղկնի, ոմանց ծծեր ողջ ողջ կը կտրատէին և ոմանց բուն ծննդեան գործարանի վրայ հրացանի բերան դնելով կը պարպէին և իրը բարբարոսական խաղ կը մրցէին թէ ո՞վ կը յաջողի գնդակը ուղղակի գագաթէն դուրս հանել։

6. Շատերն գետին պառկեցնելով սուին կոկորդէն գետին կը մխէին և չարաչար մահւամբ կը սպանէին։

7. Շատերն ողջ ողջ ծառերէ կախելով, հեռուէն հրացանով նշան կառնէին և կը զարձանային, մինչև որ խեղճ զոհը հոգին փչէր։

8. Ոմանց արու անդամներ կտրելով տակաւին ողջ բերանին կը դնէին և ապա մարմնոյ միւս մասեր մաս մաս կտրատելով կը մահացնէին։

9. Մանր երեխաներու աչքեր կը փորէին և ապա սուին փորը կոխելով կը սպանէին։

10. Իսկ տեսքով գեղեցիկ աղջիկներ և կանայք ու կայտառ մանկունք, զօրապետք ու քիւրդեր մէջերնին բաժնելով հետերնին տարին։

Այսպէս վերոյիշեալ դաւառները աւեր ու անապատ դարձուցին, երբ Երիզայէն հասաւ Դ.-րդ բանակի հրամանատար, որ անձամբ պատերազմի վայր գնաց և տեսնելով տակաւին արեւու առջև մնացած անթիւ դիակները, որոնց հոտ չորս ժամ հեռաւորութեամբ տարածուած էր, հրամայեց զօրաց և քրդաց, որք քանի մը օր զբաղեցան և կորնչուցին զանոնք ձորերու, ջրերու և փոսերու մէջ, այնպէս որ մէկը դուրս չմնաց, և ապա զօրքերն ու քիւրդեր շէյխերով ու իլէմաներով դարձան իրենց տեղեր։ Այս պարագայիս էր որ Վանայ անգլ. հիւպատոս ի Մուշ այցելեց և քանիցս փորձեց պատերազմի վայրն երթալ և անձամբ տեսնել աւերեալ դաւառներ, սակայն կառավարութիւն արգելեց և ընդ հակոզութեամբ ի Վան դարձուց։

Այս կոտորածէն քիչերն միայն գիշեր ատեն փախչելով ազատեցան և այժմ Մշոյ դաշտի գիւղերու մէջ և այլուր յետին ատիճան թշուառութեան մէջ կը դեգերին մերկ, անօթի և հիւանդ։

ԺԳ. Բռնի մազապահ հաւաքելու ղրութիւն

Օսմանեան կառավարութիւն ինչպէս ամէն ժամանակ սովորեր Եւրոպային առջև շնորհակալեաց կեղծ հանրագրերով արդարանալ, զորս բռնի հայերէն հաւաքած է, այժմս ևս թէ կրօնականներէն և թէ աշխարհականներէն գաղտնի և յայտնի կնիքներ կը հաւաքէ բռնի և ոգի ի բռին կը ջանայ զինքն արդարացնել Եւրոպիոյ առջև՝ թէ այս բան քիւրդեր ինքնադլուխ ըրած են և զօրքեր միայն խաղաղութեան համար միջամտած են. մինչդեռ քիւրդերն ինք զրդռեց և ոտքի հանեց և ինքն ևս անոնց անուան ներքև պատերազմեցաւ հայոց հետ, եթէ քիւրդեր միայն էին պատերազմող, այսքան անթիւ զօրքեր ինչո՞ւ համախմբեց հոն և կամ թէ ինչո՞ւ քիւրդ մը իրրև յանցաւոր չբանտարկեց ցայսօր, ինչպէս հայերն բանտարկեց։ Սակայն ճշմարտութիւնն այս է, որ կառավարութիւն գործեց զայդ. և զօրքեր ու քիւրդեր իրարու հետ միացնելով հայերն այս վիճակին հասուցին։ Այս միջոցիս կառավարութիւն չորս կողմանէ պաշտօնեաներ ցրելով ժողովրդեան մէջ, որոնք բուն իրողութենէն խպառանտեղեակ են, ճնշման ներքև կը դնէ զանոնք ու կնիքներ կը հաւաքէ և եթէ մինն չուզէ կնիք տալ, կոչնագիր մը կը ղրկէ ետեւէն ու իրը քաղաքական յանցաւոր կը դատապարտէ, ինչպէս Ձեր վսեմութիւնն իսկ անձամբ կը քննէ ու կ'իմանայ։

Տե՛ս ինչպէս ամէն հաւառօտակի հայոց հարստահարութեանց և վերջին աղէտալի անցից նկարագիրն համառօտակի բրինք, զի ամէն ինչ եթէ մանրամասն գրէր, ընդարձակ հատորներ կը հարկաւորուէին։ Թո՛ղ լսէ Եւրոպա՛, թո՛ղ գիտնայ համօրէն աշխարհ, թէ լուսաւորեալ ԺԹ-րդ դարու մէջ որչափ ահռելի և քանի անլուր ոճիրներ գործեց իսլամ բարբարոսութիւն ընդդէմ հայոց ի նախատինս քրիստոնէութեան և մարդկութեան առհասարակ։

Ըսէք կ'աղաչեմք, ո՞ր խիղճ, ո՞ր կրօնք, ի՞նչ ազգութիւն կը հանդուրժէ պատմութեան մէջ չլսուած այս եղերական ու ահռելի տեսարաններու հանդէպ, հայեա՛ Ցէր ի բարձանց և գթա՛ ի տառապանս մեր։ Գթացէք և դուք ո՞վ ազնիւ սերունդք Եւրոպեան աշխարհի, գթացէ՛ք այս անկեալ ազգի թշուառութեան, բաւական է նորա կրած այս դարաւոր վերքերն, դարման մը տարէք նմա, դարման մը փրկարար և անմիջական, զի ահա մահամերձ է նա և կ'երերայ ընդ մէջ մահու և կենաց. իրենց յոյսը Ձեզ և Ձեզմով Եւրոպիոյ պաշտպան բարեխնամ տէրութեանց վրայ դրուած է, կենդանացուցէք այդ լոյս և մի թողուք զայն այլ ևս Մահմեդանդութ զաւակի ճիրաններուն մէջ։

Գուցէ գտնուին ազգիս մէջ կրօնական և աշխարհական դաւաճաններ, որոնք առ ահի կամ շահասիրական և փառամոլ ձգտումներով ուզեն ի նպաստ օսմանեան քաղաքականութեան վկայել, սակայն այնպիսեաց թող կարևորութիւն չ'ընծայի, ճշմարտութեան և ընդհանրութեան շահը թող չզոհի այդպիսեաց, ինչ որ չենք սպասեր արդէն Ձեր արդարասիրութենէն։

Ի վերջ բանիս կ'աղաչեմք արտասւագին, ի սէր Աստուծոյ, ի սէր մարդկութեան ազատեցէք զմեզ մեր այս դարաւոր կապանքներէն, ապա թէ ոչ այս անգամ ևս հայերն Եւրոպիոյ բարեխնամ տէրութեանց շնորհիւ չ'ազատուին, մնացեալ դաւառներն ևս կոտորել պիտի տայ և ծածկէ։ Կը խնդրեմք ազատեցէք ուրեմն մնացեալներու կեանք և պատմութեան էջերն ոսկի տառերով թող արձանագրեն այս տողերն. — յաւէտ օրհնեալ յիշատակն Եւրոպիոյ այն ազնիւ և ազատասէր ազգաց, որք աքնեցան և ճգնեցան վասն փրկութեան թշուառ Հայաստանի։

Առաջ. տեղապահ կենաճի

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՏԱՃԱՏ ԳՆԹՈՒՆԻ

1895 յունուար 20
ի Մուշ

ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ԼԱՎՐՕՎԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

IV

ԱՆՀԱՏԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բ.

«Պատմական խոհեմութեան» պատգամախօսներին. — Ժողովրդի ոգին մարդկային փորձառութիւնը եւ պատմութեան բանականութիւնը. — Պատմական մեծ դէմքերը. — Օրինակներ. — Սովորական անձնաւորութիւնների ոյժը.—Հասարակական կուռի ընթացքը.—Երեք ասիճանների·—

Քննադատող անձնաւորութիւնների՝ ճարաւոր եւ անիրաժեշտ դաշնակիցներ. — Անանուն հերոսների բազմութիւնը. — Զանգւածը՝ ճարաւորութիւն պրոգրէսի. — Քննադատող անձնաւորութիւնը՝ միակ իրական գործօնը պատմութեան. — Փոխյարաբերութիւն անհատի եւ հասարակութեան միջեւ.

—

Լավրովի մտածողութեան յատկանշական կողմերից մէկն է այն, որ նա իր պատմափիլիսոփայական յղացումների մէջ մշտապէս հաշւի էր առնում նաև Ռուսաստանի անցեալ և ներկայ իրականութիւնը։ Պատմափիլիսոփայական իր ըմբռնողութեան համար այնքան բնորոշ և արժէքաւոր՝ „Պատմական նամակները“ հրատարակութեան տալով այնպիսի մի ժամանակ, երբ ռուս հասարակական մտքի շրջանում մի քանի հակասական հոսանքներ էին դրսևորւել, բնական է, որ նա պիտի անդրադառնար այդ հոսանքներին և իր վարդապետածը պաշտպանէր։ Այսպէս անւանւած „պատմական խոհեմութեան“ քարոզիչների ստեղծած հոսանքը մէկն էր լավրովեան դպրոցին հակադիր հոսանքներից։ Սկզբնաւորւելով որպէս մի հակազդեցութիւն նախկին գեկտեմբերեանների և նարոդնիկների դէմ, ունենալով բաւականաչափ կրքոտ և կարող հետևողներ, այդ հոսանքը սպառնում էր արժէք ստանալ 60ական թւականների իրականութեան մէջ։ Եւ ահա Լավրովը իր շանթերն է ուղղում դէպի „պատմական խոհեմութեան“ առաքեալները, միաժամանակ պաշտպանել ջանալով նաև պատմութեան իր ըմբռնողութիւնը։

Անմիտնե՛ր — ասում էին այդ առաքեալները Լավրովի՝ „քննադատօրէն մտածող անձնաւորութիւնների“ հասցէին — անմիտնե՛ր, հպատակւեցէ՛ք, որովհետև ձեր դէմ է ժողովրդի ոգին, մարդկային փորձառութիւնը, պատմութեան բանականութիւնը։

Սակայն, ի՞նչ է այդ ժողովրդական ոգի ասածդ, հարցնում է Լավրովի։ Չէ՞ որ ինչ գովելին է, արդարացին ու ճշմարիտը այդ ոգու մէջ, առաջացել են դարձեալ քննադատող և գործող անձնաւորութիւնների շնորհով. դրանք են, որ ժամանակ առ ժամանակ երևան գալով բնական և պատմական միջավայրում, ազդել են նախ փոքրամասնութեան և ապա նրա միջոցով նաև մեծամասնութեան վրայ։ Չէ՞ որ ժողովրդական կուլտուրայի ստեղծողները այդ անձնաւորութիւններն են եղել։ Չէ՞ որ նրանք են, որ նախկին կուլտուրական ձևերի մէջ նոր մտքեր են մտցրել, նոր, թարմ ձևերի համար հները փոփոխել և հիմնայատակ արել։

Դիտեցէք ժողովուրդների կեանքը, և պիտի տեսնէք, որ պատմական ամեն վայրկեանի ժողովրդի կեանքը արդիւնք է երեք տարրերի. դրանք են՝ բանականախուսափելի, պատմականաւանդական և անձնականմտածուած։ Դրանց կոմբինացիան (խմբակցութիւնը) կազմել և կազմում է ժողովրդական ոգին։ Դրանց մէջ անխուսափելին միայն ֆիզիկականկլիմայականն է. մնացածները փոփոխւում են մշտապէս անձնական մտածումների և գործողութիւնների ազդեցութեան տակ։ Քիչ մտածող և քիչ գործող անհատների միջավայրում աւանդական կուլտուրան մի երկար շարք սերունդների կեանքում համարեա անփոփոխ է մնում. քաղաքակրթութեան վիճակը աւելի և աւելի լճանում է. „ժողովրդական ոգին“ ընդունում է այնքան որոշ ձևեր, որ կարելի է նկարագրել այնպէս, ինչպէս անասունների կեանքը։ Բայց երբ քննադատութիւնը ծայր է տալիս, եռանդը խտանում, կուլտուրան ևս փոփոխւել է սկսում նախ փոքրամասնութեան մէջ, ապա տարածւում նաև մեծամասնութեան վրայ։ Այդ դէպքում քաղաքակրթութեան հիմունքները դառնում են յաճախակի անհաստատ, բայց հասարակութիւնը երբէ՛ք չէ քարանում։

Այսպէս։ „Ժողովրդական ոգին“ անցեալ և տւած էպօխայի՝ քննադատօրէն մտածող անձնաւորութիւնների ստեղծած ոգին է. նրանց բոլորի ոգին, որոնք ըմբռնել և ըմբռնում են ժողովրդի պատմութիւնը, որոնք անայողդողդ կերպով ձգտում են է՛լ աւելի ճշմարտութիւն, է՛լ աւելի արդարութիւն մտցնել հասարակական կեանքի մէջ։

Ճիշտ այդպէս „մարդկութեան փորձառութիւնը“ այլ բան չէ, քան մարդկային պատմութեան ըմբռնողութիւնը՝ նոյն այդ քննադատօրէն մտածող և կամքի էներգիայով օժտւած անձնաւորութիւնների կողմից։

Իսկ „պատմութեան բանականութիւնը“ աւելին չէ, քան սոսկական մի բառ, ուրւական՝ ցնորողների համար։ Մեծամասնութիւնը մշտապէս հպատակւել է անհրաժեշտականութեան. փոքրամասնութիւնը մշտապէս ձգտել է վայելել. և միայն քիչ թւով անձնաւորութիւններն են, որ կամեցել են հասկանալ պատմութիւնը և ճշմարտութեան ու արդարութեան կարգը մարմնացնել կեանքի մէջ։

Ահա ճի՞շտ որ, „խելայեղութիւն է“, շարունակում է Լավրովի, երբ անձնաւորութիւնը գիտակցւած կռիւ է յայտարարում սովորութիւններով, աւանդութիւններով, ֆիզիկական բռնութիւններով, բարոյական նախապաշարումներով կաշկանդւած հասարակաձևերի դէմ։ Ճի՞շտ որ անպատակ և անհետևանք է այդ կռիւը, ինչպէս պնդում են „պատմական խոհեմութեան“ պատգամախօսները։ Բայց ինչպէ՞ս է առաջ ընթացել պատմութեան անիւը. ո՞վ է նրան շարժել։ — Միայն գիտակցող, քննադատող և կռւող անձնաւորութիւնները, պատասխանում է Լավրովի։ Նրանք, գաղափարի այդ մարտիկները հասան, սակայն, այդ հետևանքին, ոյժ դառնալով, և անհրաժեշտաբար ոյժ պիտի դառնայ։

Հասարակական ձևերի դէմ ամեն առանձին անձնաւորութիւն, իրօք, անոյժ է. սա չէ նշանակում, ի հարկէ, թէ հասարակութեան մէջ չկան անձնաւորութիւններ՝ իրենց արտասովոր կամքերով և ուրիշ առաքինութիւններով, որոնց պատմական թատերաբեմ իջնելը կամ հեռանալը հսկայական փոփոխութիւնների պատճառ չլինէին։ Օրինակներ բազմաթիւ են։ XVIII դարու երկրորդ կէսին Պրուսիայի դերը, դրա հետ կապած մի շարք եղելութիւնների բնոյթը միանգամայն տարբեր կը լինէր, եթէ Ելիսավետա Պետրովնան մի տարի յետոյ մեռնէր կամ եթէ նրա յաջորդը ուրիշ յատկութիւնների տէր լինէր։ Նոյն ժամանակներում Լեհաստանի վիճակը ևս, գոնէ իր մանրամասների մէջ այլ կը լինէր, եթէ Եկատերինան և Ֆրիտրիկոս II-ը ուրիշ առաքինութիւնների տէր լինէին, քան ունէին։ Բէֆորմացիայի առաջին շրջանին Լիւթերը և Կալվինը միանգամայն այլ գոյն տուին, քան կը ստանար նա, եթէ „պատմական կոմբինացիայի հանգոյցում“ ուրիշ անձնաւորութիւններ կանգնած լինէին։ Նոյն իսկ գիտութեան շրջանում Կիւվէի անձնական ազդեցութիւնը և փիլիսոփայութեան մէջ Կուզէնի անձնական բնաւորութիւնը իրենց խոշոր նշանակութիւնն են ունեցել։

Մի կողմ թողնելով պատմական խոշոր դէմքերի նշանակութիւնը պատմութեան անցուդարձումի մէջ, քննադատող անձնաւորութիւնների կռիւը՝ հասարակական ձևերի դէմ խելառ պիտի լինէր այն դէպքում, եթէ նրանք չկարողանային ոյժ դառնալ։ Եւ հենց նրանով, որ Լավրով հին և նոր պատմութեան փորձառութեամբ ցոյց է տալիս, որ դա ոչ միայն հնարաւոր է, այլ և միակ հնարաւոր ճանապարհը, որով պատմական պրոգրէսն է իրականանում, նրանով, որ նա ցոյց է տալիս թէ ինչպէս քննադատող անձնաւորութիւնները հասարակական ոյժ են դարձել—դրանով իսկ մեր առջևն է հանում անհատի պրոբլեմը իր վերջնական լոյսով։

Անձնաւորութիւնների ոյժը, այո՛, որպէս միաւորների ոյժ, հասարակական անցուդարձումի մէջ չնչին է, աննշան։ Բայց եթէ անձնաւորութիւն իրօք քննադատօրէն մտածող անձնաւորութիւն է, նա երբէ՛ք միայնակ չէ։

Թշուառութեան ծովում օրհասական կերպով լողացող միլիոնաւորների մէջ եղել են մշտապէս զգայուն հոգիներ՝ խանձած արդարութեան և ճշմարտութեան խօսքի ծարաւով։ Այդ զգայուն հոգիները պատմական բոլոր էպոխաներում եղել են և կան. և նոյնքան աւելի մեծ թիւով, որքան աւելի արդարացի և ճշմարիտ է քննադատող անձնաւորութեան քարոզը։

Ահա թէ ինչպէս են քննադատօրէն մտածող անձնաւորութիւններ պատմական ոյժ դառնում։ Ճշմարտութիւնը ստեղծում է մի ոյժ, թէև դեռ անչափելի, անտեսանելի, յամենայն դէպս—մի ոյժ։ Ճշմարտութիւնը զգացող զանգուածները այդ շրջանում դեռ անվճռական են, երերուն. ոյժը դեռ իր թագնած, լատենտ վիճակի մէջ է։ Հասարակութիւնը ապրում է դեռ զարթնումի մի շրջան, երբ նա իրեն տակաւին դժուարութեամբ է հաշիւ տալիս։ Այդ ոյժը իրականութեան մէջ մտցնելու համար անհրաժեշտ է օրինակ, զգացումից, խօսքից անցնել գործին։ Հարկաւոր են մոլեռանդ, եռանդոտ, ամեն զոհողութեան պատրաստ, ոչ մի վտանգի առջև կանգ չ'առնող անձնաւորութիւններ։

Եւ ահա՛, առաջ են գալիս մարտիրոսներ, հերոսներ, որոնց մասին եղած առասպելները, նրանց իրական առաքինութիւնները էլ աւելի չափազանցում են. դրանք դառնում են ամբոխի համար անհասանելի իդէալներ։ Բայց լեգենդան հազարաւորների մէջ ներշնչումներ է մտցնում, որ անհրաժեշտ են կռուի վճռական րոպէների համար։ Երբէ՛ք չ'արտասանած խօսքերը կրկնւում են նախ կէս-հասկանալի, ապա հասկանալի ձևերով։ Մտքեր, որոնց դէմ իդէալականացրած, պատմական դէմքը անտարբեր է եղել, որով նա չէ ոգևորուել, յետագայ սերունդների միջոցով ներշնչման աղբիւր դառնալով գործի են փոխում։

Հասարակական գիտակցութեան և կռուի այս շրջանում քննադատօրէն մտածող անհատները իրենց առջև ունին արդէն իսկական ոյժ, բայց դեռ անկազմակերպ վիճակի մէջ։ Զարթքի դէմ կռիւը պահանջ է դարձել. մարդիկ կռւում են, սակայն, ոչնչանում, առանց որ չարթքի արմատները շօշափւեր այդ կռիւներով։ Առաջ են գալիս հակառակութիւններ՝ կռւողների շարքերում. կռիւ՝ կռւողների դէմ։ Կռւի հետևանքները չկան դեռ, բայց և այնպէս, այս շրջանում արդէն ոյժն է, որ իրեն ճանաչել, գիտակցել է։

Գալիս է երրորդ շրջանը։ Քննադատօրէն մտածող և եռանդով կամեցող անձնաւորութիւնները ոչ միայն կռիւ են ցանկանում այժմ, այլ և յաղթութիւն։ Առաջանում է նպատակայարմար կռւի և կազմակերպութեան հարցը. ամենաբիչ ոյժի օգնութեամբ ամենամեծ հետևանքին հասնելը անհրաժեշտութիւն է համարւում։ Անցած են այլ ևս հերոսական գործիչների, երևակայական մարտիրոսների, ոյժերի անհաշիւ վատնման ժամանակները։ Այժմ ամենադժուարին աշխատանքն է սկսւած։ Առաջին երկու շրջանները առաջացել են ինքնաբուղխ կերպով. տանջանքները միտք են ծնել. միտքը արտայայտւել և տարածւել է։ Այստեղ-այնտեղ հանդէս են եկել եռանդոտ անձնաւորութիւններ և կռւել են. նրանց կորուստը նոր էներգիայի աղբիւր, նրանց էներգիան կռւի նոր ոյժ է բերել։ Զկայ էպոխա, ժամանակաշրջան, ուր յաջորդական այս կարգը չտիրապետէ։ Այդ երկու շրջաններում կռւողները չէին կարող յաղթանակել, մինչև որ չստեղ-

ծէին երրորդ շրջանը, որը ինքնիրեն չէ, որ ստեղծւում է. նրան պիտի յղանալ մեր մտքի մէջ՝ իր բոլոր մանրամասներով, պատճառներով և հետևանքներով, նպատակներով և միջոցներով. նրան պիտի կամենալ. և կամենալ անյողդողդ կերպով. նրան պիտի նախապատրաստել և պահպանել ամբողջ ուժով։ Այս շրջանում աշխատանքը ամենադժուարին է, որովհետև անձնաւորութիւնները աւելի եռանդոտ և անհատական են։ Դրանք մշակել են իրենց համար ուրոյն մտածելաձևեր, այդ պատճառով էլ դժուարութեամբ կարող են ուրիշ տեսակէտի վրայ կանգնել։ Նրանք մշակել են իրենց համար ինքնուրոյն գործելակերպ, այդ պատճառով դժուարանում են հպատակուել ուրիշների գործելակերպերին։ Իրենց ինքնուրոյնութիւնը պահպանելու ձգտումով համակուած՝ նրանց հաճելի է առանձնակի գործել։

Միւս կողմից էլ, սակայն, նրանք կուռում են որոշ իդէալների համար։ Նրանք կամովին հրաժարւում են իրենց անհատական որոշ պահանջներից, մտքի ընդհանուր ուղղութիւն, գործունէութեան ընդհանուր կերպեր առաջացնելու համար, որոնք ուղղուած են դէպի այդ իդէալների իրականացումը։ Այստեղ երկպառակութիւնները այլ ևս տարբեր նշանակութիւն ունին, քան առաջին շրջաններում։ Այժմ քննադատող անձնաւորութեան համար որոշակի պարզուած են, թէ որտեղ են վերջանում իր անհատական զիջումները և որտեղից սկսւում դաւաճանութիւնը՝ ընդհանուր գործին։ Անկումը կասեցնելու բոլոր ճիգերը թափւում են. կռիւը չէ այլ ևս, որ մտածող անձնաւորութիւնների նպատակն է. հարկաւոր է, որ այդ կռիւը իր նպատակն ունենայ։ Հարկաւոր է, որ յաղթութիւնը իր նշանակութիւնն ունենայ. կարևորը այն չէ, թէ ով յաղթեց, այլ թէ ինչը յաղթանակեց. կարևորը յաղթանակող գաղափարն է։ Եւ ահա կռիւ ու յաղթանակի գիտակցական այդ հողի վրայ է, որ խտանում ու կազմակերպւում է մտածողների, համոզածների և եռանդով գործողների կուսակցութիւնը։

Ըստինքեան պարզ է, որ այս շրջանում ևս կուսակցութիւնը կազմակերպողների պահանջներին կատարելապէս բաւարարութիւն տուող անհատների թիւը տակաւին շատ փոքր է։ Սակայն գործի գլուխ անցած քննադատող անձնաւորութիւնները ունին իրենց հնարաւոր դաշնակիցները, ապա յանձին զանգուածների նաև անխուսափելի դաշնակիցները. վերջիններս թէև չհասած դեռ քննադատական մտքի աստիճանին, տուժում են այն իսկ հասարակական չարիքից, որի դէմ կռիւ մղելու համար կուսակցութիւնն է կազմւել։

Առաջինները—հնարաւոր դաշնակիցները — մտաւորական շրջաններին են պատկանում. դրանց մէջ ոմանք կազմակերպութեան նշանակութիւնը դեռ չեն ըմբռնել. միւսները ոչինչ չեն ուզում զիջել իրենց անհատականութիւնից. իսկ ոմանք էլ էականը երկրորդականից տարբերելու կարողութիւնը չունին։ Կան և այնպիսիները դրանց մէջ, որոնք յաղթանակի տենչով տարուած, պատրաստ են զոհելու ամեն ինչ։ Այս բոլոր տարրերը պատմական պրոցէսի վճռական վայրկեաններին կարող են դառնալ քննադատող անձնաւորութիւնների և կուսակցութեան հնարաւոր դաշնակիցները։

Բայց աւելի մեծ արժէք ունի անխուսափելի դաշնակիցների բազմութիւնը։ Անայտ հերոսների բազմութիւնն է այդ։ Եթէ պրոգրէսը քայլել անցել է դրանց վրայից, չտալով դրանց նոյնիսկ զարգացում, ապա նրանք միայն զոհերն են այդ պրոգրէսի և ոչ պատասխանատուները։ Եթէ մտաւոր զարգացումը շշոփել է նրանց, եթէ լաւի գիտակցութիւնը վառել է նրանց մէջ կեղծիքի և չարիքի դէմ ատելութիւնը, ապա պայմանները ճնշել են նրանց մէջ այդ գիտակցութեան ամեն արտայայտում։ Նրանք սահմանափակուած են, բնականօրէն, ֆիզիկական գոյութեան մշտական հոգացողութեամբ։ Բայց չնայած այդ բոլորին, նրանք իրենց մարդկային արժանիքը չկորցնելով պրոգրէսի եռանդոտ գործողներն են դառնում։ Այդ „անանուն հերոսների“ առաջ, որոնք ոչ մի աչքառու գործ չեն կատարել, նսեմանում են նոյնիսկ պատմական մղիչների ամենախոշոր ծառայութիւնները։

Մինչ յայտնի հերոսները պայքարում և յաճախ զոհւում են իրենց իդէալների համար մղած կռիւներում, այդ նոյն ժամանակում „անանուն հերոսները“ հասարակութեան մէջ մարդկային արժանիքի աւանդութիւնն են պահում, լաւի գիտակցութիւնն են խնամում, և երբ հարիւրի միջից մի խոշոր գործողի յաջողւում է իր գաղափարները իրականացնելու, նա յանկարծ իր շուրջը գտնում է ուժեղ մարդկանց խմբումներ, աշխատանքի բեռան տակ տանջուած ու մաշուած, որոնք իրենց ձեռներն են մեկնում դէպի նա։ Այդ անանուն հերոսներն են, որ ամեն խոշոր պատմական վայրկեանում փոփոխութիւնների հողն են կազմում։ Նրանք են, որ իրենց մէջ ապագայի ամբողջ հնարաւորութիւնն են պահպանում։ Մի հասարակութիւն կը կարուէր յանկարծակի պատմական պրոգրէսից, եթէ նրա մէջ չլինէին այդ անանուն հերոսների հոծ բազմութիւնը։ Բայց դրանք միայն պրոգրէսի հնարաւորութիւնն են բերում։ Պրոգրէսի իրականացումը դրանց չէ պատկանում և չի կարող պատկանիլ։ Պրոգրէսի մարմնացնողները կենսապայմանների մշտական հոգացողութիւնից ազատուած, քննադատող մտքի բարձրութեանը հասած պատմական այն անձնաւորութիւններն են, որոնց առանձնակի թոյլ ոյժերից հասարակական պատկառելի ոյժն է կազմւում. դրանք են, որ իրենց և հասարակական

իդեալների ազդանշանը տալով պատմական պրոցէսի մէջ գիտակցական կուի առաջաւորքերն են քաշում։

Անկասկած է, ասում է Լավրով, որ պատմութեան միակ իրական այդ գործօնները նաև հասարակական պրոցէսների հետևանք են։ Անկասկած է, որ դրանք իրենց մտաւոր և հոգեկան կեանքում, իրենց կենսական բոլոր պայմաններում և նպատակներում, իրենց կամքի արտայայտութիւնների մէջ, պայմանաւորուած են այն կոլլեկտիվ բազմութեան կեանքով, որի մի մասն են կազմում։ Ո՛չ մի անձնաւորութիւն իր մղումները, ըմբռնողութիւնները, մտքի և կեանքի սովորութիւնները, նպատակներն ու միջոցները ուրիշ տեղից չէ վերցնում, քան հասարակութիւնից. նրա մէջ է գործում անձնաւորութիւնը, նրա մէջ է նա կազմակերպւում։ Միւս կողմից, հասարակութիւնը աւելին չէ, քան մի ֆորմուլա, որ յարմարութիւն է ներկայացնում անձնաւորութիւնների մէջ կամ նրանցով կատարուած պրոցէսները ընդհանրացնելու։ Առանձին անհատների կարիքներն ու մղումներն են կազմում հասարակական կապակցութիւնների ու անհատական գիտակցական գործողութիւնների աստառը։ Առանց այդ կարիքների ու մղումների հասարակութեան մէջ ոչինչ տեղի ունենալ չի կարող։

Այստեղից կարելի է շտապով եզրակացնել,—և Հիպ. Տէնի հետևողներից շատերը այդ հետևանքներին են հասել—որ պատմական պրոցէսի յետագայ փիլիսոփայական ընդհանրացումը տանում է բացառապէս անձնական հոգեբանութեան խնդիրներին։ Լավրով զգուշացնում է դրա դէմ։ Յաճախ անհատական կարիքների բաւարարման և նրանց մղումներով առաջացած գործողութիւնների ձևերը կարելի է պատմութեան մէջ անմիջօրէն դիտել, որպէս կոլլեկտիվ կարիքներ և մղումներ, թէև իրօք տեղի ունին միայն ամեն առանձին րէէլ անձի մէջ։ Ապա կարիքների և մղումների մի շատ խոշոր մասը անհասկանալի կը մնան մեզ համար, եթէ անհատին դիտենք որպէս մի սոսկական միաւոր։ Հասարակութեան մէջ ունեցած նրա կեանքը և հասարակութեան միւս անդամների հետ ունեցած համերաշխութեան ձևերն են, որ հասկանալի են դարձնում մեզ անհատական մի շարք պրոցէսներ։

Պարզօրէն հասկացուած անձնական շահերը, ասում է Լավրով, պահանջում են, որ անհատը ընդհանուր շահերի իրականացման ձգտի։ Բայց միևնոյն ժամանակ հասարակական նպատակները միայն անձնաւորութիւնների մէջ են իրենց րէէլ իրականացումը գտնում։

„Պատ. նամակներում“ այդ միտքը արտայայտուած է այսպէս։ Անհատը բնականոն կերպով զարգանում է հասարակական կեանքի փոխազդեցութեան մէջ. ճիշտ այդպէս էլ հասարակական օգտակար գործունէութիւնը տեղի ունենալ կարող է միայն պատմական կեանքում մասնակցող անձնաւորութիւնների զարգացումով։ Անձնաւորութիւնների և հասարակութեան փոխազդումների և փոխառնումների մէջ անձնաւորութիւնը մնում է միշտ որպէս պատմութեան միակ րէէլ գործօնը. իսկ հասարակութիւնը, և զանգուածները կազմում են անձնաւորութիւնների կազմակերպման միակ իրական հողը։

Կարծում ենք, որ բոլոր մեր մէջբերումներից և առանձնապէս վերջին կտորներից պարզ է այն ըմբռնողութիւնը, որ ունի Լավրով քննադատող անձնաւորութիւնների պատմական դերի և դիրքի մասին։

Մեզ մնում է միայն հարևանցի կանգ առնել այն ինքնօրինակ բաժանման վրայ, որ անում է Լավրով պատմական և նախապատմական կեանքի միջև, մատնանշել այն օրիգինալ ըմբռնողութիւնը, որ ունի Լավրով կուլտուրայի վրայ և որ նա անցնում իր ամբողջ սիստեմի միջով, ապա անցնել պատմական պրոգրէսի հարցին։

Ցիշատակած երկու խնդիրների թեթևակի շօշափումը անհրաժեշտ ենք գտնում ոչ միայն այն պատճառով, որ անհատի պրոբլեմի վերլուծման ընթացքում եղած միերկու հասկացողութիւններ դրանով աւելի լուսաբանւում և որոշակի են դառնում, այլ և այն պատճառով, որ դա մի անհրաժեշտ օղակ է կազմում դէպի յետագայ և վերջին խնդիրը—պրոգրէսը։

ՍՆԱՐ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԷՋԵՐ ԲԱԼԿԱՆԵԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

XIX-ՐԴ դարի սկզբներում...

Անհաշիւ էին քրիստոնեայ „ռայա“-ի կրած ճնշումներն ու անարգանքները։ Ցունական շարժման ժամանակակից յոյն Ոդիսևս մի քանի խօսքով բնորոշում է կացութիւնը.

„Անգթութիւն, որ գործ է դրւում առանց կառավարել իմանալու, անիրաւութիւն վէզիրների, վոյեվոդների, կագիների, բուլուքբաշիների կողմից, որոնք բռնաբարում էին իրենց հաճելի ամեն մի յոյն կին, գլխատում էին ամեն մի հարուստ վաճառականի, որպէս զի յափշտակեն նրա ստացուածքը, թոյլ էին տալիս ամեն մի թափառաշրջիկ սրիկայի՝ սպանել հրապարակով այս կամ այն ռայային“... Խաղաղ, անզէն, աշխատաւոր ազգաբնակութեան համար այդ կացութիւնը աւելի քան անհանդուրժելի էր։ Սովորական հարկերից դուրս՝ գիւղացին ստիպւած էր իր տանը զինուորներ բնակեցնել, հանրային աշխատանքները ձրի կատարել, պատերազմական ու այլ կամայական տուրքեր վճարել և էն ալն։

Անսահման բռնութիւնը իսպառ չէր բթացրել սարկին։ Թշուառութեան ու յուսահատութեան գագաթին հա-

սած յոյն աշխատաւորը՝ հողագործ շինականը կամ արհեստաւոր քաղաքացին՝ թողնում էր յաճախ իր դաշտն ու արհեստանոցը և փրկարար հրացանն առած՝ ապաւինում էր հայրենի լեռներին... Նա „աւազակ“ էր, բողոքող։ Նա իր անառիկ թաքստոցից պարբերաբար կը յարձակուէ թիւրք գիւղերի ու կառավարական պաշտօնեաների վրայ, կը կողոպտէ և կրսպանէ, այս կամ այն ձևով վրէժխնդիր կը լինի իր հայրենիքի դահիճներից... Այդպէս կազմուեց կլեֆտների կամ հայդուկների հռչակաւոր դասակարգը, որ պիտի դառնար նախակարապետ ազատագրական շարժումների և որի ներկայացուցիչները մենք գտնում ենք այնուհետև արևելեան բոլոր ազգերի ապստամբական կռիւներում։

Սակայն XIX-րդ դարու սկզբում արդէն իսկ երերւում էր օսմանեան պետութեան հսկայ ու խարխուլ օրգանիզմը, կենարօնախոյս ձգտումները ծայր էին տալիս ամենուրեք. Փորը Ասիոյ քրդական դէրէբէյիներ, Արաբիա, Եգիպտոս, Յունիս, Ալժիր, Բոսնիա-Հերցեգովինա, Ալբանիա, Մօլդավ-Վալախիա, Սերբիա, Յունաստան, գրեթէ բոլոր հատուածները—ոմանք կիսանկախ վիճակում—եռում էին դժգոհութեամբ, ձգտում էին բնազգօրէն դէպի անկախութիւն ու ազատութիւն։ Արևմուտքի գոռ անցքերն էլ իրենց խուլ արձագանքներն ունէին այդ վայրենի խորշերում, ուր ժողովրդային զանգուածները այնքա՞ն ընտելացել էին „ռայա“ի զգիր, ողբերգական կացութեան։

Յունաստանի մէջ, ինչպէս ասացինք, վաղուց արդէն երևան էին եկել ազատարար Բողբի կայծերը։ Առաջին ըմբոստ նահատակն էր Կոնստանդին Ռիգաս։ 18-րդ դարու վերջերում, նա վառած Ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբաններով, յղացաւ իր հայրենիքի ապստամբութեան գաղափարը, մի քարոզչական պտոյտ արեց յոյն գաղութներում, պատերազմական ծրագիր կազմեց, բանակցութեան մէջ մտաւ Վիեննայի ֆրանսիական դեսպանի հետ, փորձեց անձամբ ներկայանալու Բօնապարտին՝ նրա կարող միջամտութիւնը հրաւիրելու։ Յոյների Խրայել Օրին... Աջողութիւն չունեցաւ յունական ազատութեան այդ առաջին ռահվիրան։ Աւստրիական կառավարութիւնը բռնեց նրան և յանձնեց մի քանի ուղեկիցների հետ՝ թիւրքերին։ Բելգրադի փաշայի հրամանով Ռիգաս նետուեց Դանուբի ջրերը (1798 թ.)։ Ասում են, մահից առաջ նա յայտարարեց. „Ես ձգեցի սերմը, ժամանակով ազգը կը հնձէ նրա գեղեցիկ պտուղները“։ Իր ոտանաւորներով նա քիչ անգամ չէր ոգևորել հայրենակիցներին, մասնաւորապէս հայդուկներին.

„Պալիկարնե՛ր, մինչէ՞ դեռ երկար պիտի ապրիք առիւծների պէս առանձնացած կիրճերի մէջ, լեռներում ու ժայռերում, մութ այրերում ու անտառներում... Մինչէ՞ երկար պիտի թաղենք անպաշտպան ձեր եղբայրներին ու ծնողներին, ձեր հայրենիքը, ձեր տունն ու տեղը։ Յիշեցէք, որ լաւագոյն է մի ժամ միայն ազատ ապրել, քան հազարաւոր տարիներ բռնակալի լծի տակ“...

Հիմնեցին այլ և այլ տեղերում գաղտնի ընկերութիւններ։ Նրանց համար ոչնչնչենական խրախոյս էր արևմտեան, իտալական „կարբօնարիզմը“, այդ ընդարձակ և ահաւոր յեղափոխական ընկերակցութիւնը, որի մասին կը խօսենք յետոյ։ Ոչ պակաս զօրաւոր խրախոյս էր և այն բուռն համակրութիւնը, որ վաղուց արդէն ցոյց էր տալիս հիւսիսային հզօր քրիստոնեայ պետութիւնը, Ռուսաստանը՝ դէպի այդ ճնշուած ու հաւատակից ժողովուրդները։ Ռուսաց պետական ծառայութեան մէջ փայլուն դիրք ունէին մօլդավ հօսպօդար Իպսիլանտի և յոյն կապօդիստրիա, որոնց և վիճակուած էր դեր խաղալ Բալկաններում վառելիք ապստամբական հրդեհների մէջ։

Գաղտնի ընկերութիւնների մէջ նշանաւոր էր յունական Հէթէրեան։ Բառի իմաստն է՝ „ընկերակցութիւն՝ փոխադարձ աջակցութեան համար“։ Կար Հէթէրիա—զուտ գրական, օրինական, հրապարակային։ Հիմնելով 1812-ին Աթէնքի մէջ և ապա ճիւղաւորելով ամբողջ երկրում՝ նա ձգտում էր զարկ տալ ազգային վերածնութեան, հիմնում էր այդ նպատակով դրամական ֆօնդեր, դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ ու գրական հանդէսներ, հրատարակում էր հին յունական կլասիկներին, ժողովում էր ազգային մեծարժէք հնութիւնները, ղրկում էր բազմաթիւ յոյն երիտասարդներ դէպի եւրոպական համալսարանները, արծարծում էր ամեն կերպ և ամեն տեղ հայրենասիրութեան հաւատամքը։ Աջողութիւնը ահագին էր. ասում են, այդ պատկառելի ընկերակցութեան անդամաթիւը հասել էր 80,000-ի։

Կար և Հէթէրիա—գաղտնի, քաղաքական։ Սա լրացուցիչ էր առաջինի։ Երկուսի նպատակը իրօք նոյնն էր՝ թօթափել տաճկական լուծը և վերանաւաճել հին փառապանծ հայրենիքը։ Տարբեր էր գործունէութեան միջոցները։ Գաղտնի հէթէրիականները հաստատել էին իրենց կենտրօնը Ռուսաստանի մէջ, Օդեսսայում, ապա Մօսկուա։ Նրանց նպատակն էր՝ արծարծել ամբողջ հելլեն աշխարհում ապստամբութեան գաղափարը, բորբոքել ատելութիւնն ու վրէժը թիւրքերի դէմ և ընկերութեան անդամները երդումով միանում էին այդ հայրենավրէժ ատելութեան աւետարանի շուրջը։

Ընկերութեան գանձարանն ևս գտնւում էր Ռուսաստանում։ Կենտրօնը, բացարձակապէս քաջալերուած ռուս կառավարութիւնից, ղրկում էր շարունակ քարոզիչներ Թիւրքիոյ այլ և այլ կողմերը՝ տարածելու յեղափոխութեան սերմերը, մշակելու գետինը՝ ապագայ գործողութիւնների համար։ 1818-ին Հէթէրիան արդէն իր գաղտնի կայանն ունէր—Կ. Պոլսում։ Կենտրօնական կոմիտէն 8 հոգի էին, մէկը մնում էր օսմանեան մայրաքաղաքի մէջ, միւսը Պետերբուրգ, երրորդը Բուքրէշ, միւսները Թիւրքիոյ այլ և այլ կողմեր։

Հասան գործելու օրերը։ 1821-ին յոյն Իպսիլանտի թեւաւորուած ցարի հովանաւորութեամբ, անցաւ Ռումանիա (Մօլդավ-Վալախիա) և փորձեց ոտքի հանել ազգաբնակութիւնը թիւրք կառավարութեան դէմ։ Փորձը վիժեց։ Ժողովուրդը տակաւին անպատրաստ՝ չշարժուեց տեղից։ Իպսիլանտի ամեն տեղ ասում էր, թէ Ռուսաստանը շուտափոյթ օգնութեան կը հասնի. այդ յոյսը սակայն չ՚արդարացաւ, ցարը այնքան էլ չէր շտապում և ի վերջոյ շարժման պարագլուխը հռչակուեց, իբրև խարեբայ։

Անշարժ չմնաց Յունաստանը։ Ապստամբութեան կոչը ուժգին արձագանք գտաւ հելլենների սրտերում։ Նրանք

ուժեղ էին և ահարկու իրենց խանդավառութեամբ, թէև չափազանց տառապած ու ստրկացած թիւրքական դարաւոր ռէժիմի տակ։ 1821 մարտի 21-ին մի արքեպիսկոպոս տնկեց Կալավիտրա քաղաքի պարիսպների վրայ անկախութեան դրօշը և անմիջապէս պայթեց ապստամբութիւնը ամբողջ Մօրէուս։ Հէթէրիան լաւ էր աշխատել։ Մեծ թւով պատրաստ, զինավարժ ուժեր, ճարպիկ նաւավարներ, մարզուած կեանքի զրկանքների մէջ։ Օրինակելի էր և ազգային համերաշխութիւնը — գէթ շարժման սկզբներում։ Դասակարգերը ջնջել էին ազգային մեծ դատի առջև, հարուստ ու աղքատ ձեռք ձեռքի տուած կազմակերպում էին դիմադրութիւնը։ Յոյն հարուստներն էին մատակարարում պատերազմական պաշարը, ռազմամթերքը։ Ահա թէ ինչպիսի յայտարարութեամբ էր հրապարակ գալիս ամենախոշոր հարուստներից մինը, Լազար Կոնդուրիոտիս.

„Երեսուն տարուց ի վեր ես ամբարել եմ գանձեր — և բախտաւոր կը լինէի, եթէ նրանք այսօր ծառայէին իմ երկրի ազատութեան... Յուսով եմ, որ միւս հարուստներն ևս կունենան նոյն զգացումները. եթէ ոչ, դարձեալ մի՛ վհատէք, ես նաւատօրմի ամբողջ ծախքը կը հոգամ մենակ“։

Սոսկալի, արիւնահեղ ընդհարումներ։ Պատմութիւնը վկայում է, որ իրենց առաջին յաղթական կռիւների մէջ յոյն ապստամբները ցոյց էին տալիս ծայրայեղ անգթութիւն դէպի իրենց ձեռքն ընկած թիւրք զոհերը—կանայք, ծերեր, երեխաներ։ Որքան գարշելի—այնքան և բնական... Նոյն տակտիկն են ունեցել շարժման սկզբներում բոլոր միւս ազգերի յեղափոխական զաւակները... „Ակն ընդ ակա՛ն“... Եւ միթէ՞ այդպէս չէր նաև արևմտեան յեղափոխութիւնների ընթացքում, միթէ՞ այդպէս չէին „Գիլոտինական մեծ շարժման“, Ֆրանսիական Յեղափոխութեան և բոլոր միւս քաղաքական ու սոցիալական փոթորիկների դրդիչներն ու կատարողները... Մարդկային հոգեբանութիւնը ամենուրեք նոյնն է, ամենուրեք նոյն ձևով է հակազդում, ըմբոստանում դարաւոր բռնութեան նիւթած ոճիրների դէմ. մարդկային վրէժխնդրութիւնը—դարերով մթերուած, ատելութեամբ վառուած—ուրիշ ելք չի գտնում, ուրիշ միջոց չի ընդունում յաղթանակի վայրկեաններին, բայց եթէ անգթութիւն ու աւերած, մոլեգնութիւն ու զարհուրանք. բնական էին, աւա՜ղ, այդ արեան նախճիրները և այդ ոճրալի սարսափները, որ նիւթում էին յոյները իրենց երէկւայ տէրերի դէմ, յաճախ անմեղ և անմեղ մահմեդական ժողովրդի դէմ. բնական էին յեռագայում և սերբերի, բուլգարների, կրետական, մակեդոնական ապստամբների մերթ ընդ մերթ արտայայտած վրիժառու բռնկումները... ինչպէս որ բնական էին, տարբաբախտաբար, և հայ ապստամբ խմբերի նոյնքան ցասկոտ ու արհաւրալի ժեստերը, սկսած Դաւիթ բէկի օրերից—երբ հայկական դանակը Սիւնիքի ձորերի մէջ անհնայ մորթոտում էր օսմանցիներին առանց սեռի ու հասակի խտրութեան—մինչև 1890-ի „արշալոյսի“ օրերը, երբ Կուկունեան խումբը թիւրքական սահմանագլխում, առանց վարանելու, կոտորում էր իր ձեռքն ընկած բոլոր թիւրք ու քիւրդ զոհերին։ Մարդկային զգացումն ու բանականութիւնը ցասումով ըմբոստանում են այդ սոսկալի արարքների դէմ, բայց համաշխարհային պատմութիւնը՝ յաւիտենօրէն դաժան, անխռով ու անտարբեր՝ շշնջում է. „այդպէս եղել է, այդպէս լինելու է“... Քաղաքակրթութիւնը դարեր շարունակ տաշում է և տրորում մարդ-գազանի ճիրանները, բայց տակաւին չի ամոքել նրա անզուսպ կատաղութիւնը և արիւնռուշտ թռիչքները... Պիտի ամոքի՞ երբևիցէ... Հաւատում ենք և օրօրւում յոյսերով...

Վերադառնանք հելլէնների ապստամբութեան։

Աւելի ևս զարհուրելի եղաւ նրա յարուցած հակահարուածը։ Աւելի անգութ և ծաւալուն՝ մահմեդական վրէժխնդրութիւնը։ Առաջին մեծ „ազգային ապստամբութիւնն“ էր, գրեթէ անակնկալ՝ օսմանեան տէրերի համար։ Եւ սոսկաց բռնակալութիւնը, գլուխը կորցրեց ու դիմեց այն միակ ու գերագոյն միջոցին, որին նա ընդունակ էր իր բարբարոս անճարութեան մէջ և որին այնուհետև հաւատարմօրէն պիտի հետևէին սուլթանները իրենց հպատակ քրիստոնեաների ապստամբական շարժումների հանդէպ... Նա դիմեց կոտորածի։

Քիոսի ջարդը

Հայկական տրագեդիայի ծաւալը նա չունեցաւ, բայց և նաև ցնցող չէր իր դժոխային զարհուրանքներով։ Իսկ մի քանի մանրամասներ կարող են նոյնիսկ գերազանցել հայկականին։ Կ. Պոլսի յոյն պատրիարքին կախեցին պատրիարքարանի դրան վրայ և 80-ի չափ եպիսկոպոսներ ու վարդապետներ տեղնուտեղը սպանուեցին։ Եկեղեցիները թալանուեցին ու փլատակ եղան և տասնեակ հազարաւոր մարդիկ կոտորուեցին։ Ահռելի ջարդեր տեղի ունեցան Քիոս, Կիպրոս և Կրետէ կղզիներում և ուրիշ տեղեր. Յունաստանը լողում էր արեան մէջ։ Կրակ ու արիւն Թեսալիայի, Բէօտիայի, Ատտիկայի մէջ։ Եզակի էր իր մոլեգնութեամբ Քիոսի ջարդը. 100,000 բնակիչներից 47,000-ը վաճառուեցին, որպէս գերիներ, մնացածը խողխողուեցին։ Յոյն ականատես պատմագիրներից մէկը, Զուցս, այսպէս է նկարագրում այդ վիթխարի կատաստրոֆը.

Կարա-Ալին ներս խուժեց իր ասիական հորդաներով։ Վերջինները սարսափելի ճիչեր արձակելով, տարածուեցին քաղաքի մէջ, կրակ նետեցին ամեն տեղ, ջարդեցին եկեղեցիների դռները, քանդեցին մեռելների գերեզմանները, ուր

կարծում էին, թէ կը գտնէին թաղուած գանձեր, ապա ցրուեցին գերեզմաններից հանած ոսկորները փողոցներում, խառնելով մեռելների նշխարները մեռնողների արեան հետ... Ապա եկան զինուորները և անձնատուր եղան բարբարոս խրախճանների. քարշ էին տալիս հերարձակ կանանց աւերակների վրայ և խայտառակ տանջանքներով մեռցնում նրանց՝ իրենց սպանուած ամուսինների դիակների վրայ... Դերվիշները, արբած Քիոսի անուշաբոյր գինիներով, դիւային պար կազմեցին հազարաւոր ցցի հանուած գլուխների շուրջը... Աւերակների կոյտ դարձնելով 25 հազար բնակիչ ունեցող քաղաքը, նրանք տարածուեցին գիւղերը և կոտորեցին հազարներով ու սոսկալի չարչարանքներով—կին, երեխայ, ծեր, քահանայ, բոլոր նրանց, որոնք չէին կարողացել փախուստ տալ։

Քիոս կղզու 100,000 բնակիչներից մնացին ընդամենը 900 հոգի...

Այո՛, չափազանց տխուր և յուզիչ էջեր ունի հելլենների մարտիրոսագրութիւնը.. Միաուլիս և Կանարիս—յունական ազատամարտի հերոսական շարքից—եկան յետոյ իրենց հրձիգ նաւերով վրէժ հանելու թիւրքերից, կատարեցին փայլուն ու անվեհեր թռիչքներ, օգ հանեցին թիւրքական բազմաթիւ նաւեր, բայց թշնամին դեռ երկար մնում էր իր յաղթական դիրքերում, նա դեռ երկար ճօճում էր իր մարդաջինջ եաթաղանը։ Ռուսաստանը չէր գալիս... Օգնութեան ձայն չէր լսւում և Արևմուտքից։ Շարժումը ընթանում էր գահավիժօրէն դէպի անդունդ, դէպի ահեղ ու անդառնալի պարտութիւն։ Ներքին մրցումներն ու կռիւները առանձնապէս ծանրացնում էին կացութիւնը։ Սկզբնական միահամուռ գաղափարային խանդավառութիւնը չքանում էր և շարժումը կտրատւում մասնիկների. արկածախնդիր և աւազակաբարոյ տարրերը ստւարանում էին հրապարակի վրայ և իրական պատուհաս դառնում յեղափոխական շարժման համար։ Ապստամբութեան պարագլուխներն իսկ, սակաւ բացառութեամբ, տարւում էին մրցման տենդով... Մի կատաղել քաղաքացիական կռիւ էր, որի դէմ Զայլդ-Հարոլդի աստւածաշունչ հեղինակը երկար և իզուր պայքարեց աղաչանքով ու յորդորներով։

Եւրոպան—անկարեկիր և անտարբեր։ Ոչ մի պետութիւն, ոչ իսկ Ռուսաստանը, չէր վստահանում առանձնակի միջամտել. „շահերի հակամարտութիւնը“, դիւանագիտական անարգ հաշիւները այն ժամանակից արդէն շեշտւում էին Արևելեան խնդրի արիւնաներկ կրկէսի մէջ...

Կռիւը, այնուամենայնիւ, շարունակւեց։ Նա ունեցաւ մի շարք յուզիչ դրւագներ։ Մինչ զինուորական պարագլուխները կազմակերպում էին կռիւն ու դիմադրութիւնը, ուրիշ նշանաւոր գործիչներ — Մավրոկօրդատօ, Ղեգրիս եւայլն—գումարում Էպիդաւրոսի մէջ, գեղջկական մի յարկի տակ „Սահմանադիր Ժողովը“ ազգի պատգամաւորներից (1822 յունւար) և իրենց ղեկավարութեամբ խմբագրում էին երկրի հիմնական օրէնքները, ներշնչւած Ֆրանսիական Յեղափոխութեան հռչակաւոր ծանուցումներով.

1. Բոլոր կրօնները ազատ են և աղատորէն կը կատարւին բոլոր կրօնական արարողութիւնները։
2. Բոլոր յոյները ազատ են օրէնքի առաջ, առանց խտրութեան դիրքի ու ծագման։
3. Իւրաքանչիւր քաղաքացու գոյքը, պատիւն ու ապահովութիւնը գրւում են օրէնքի պաշտպանութեան տակ։

Յոյն ազգը—ասում էր Սահմանադիր Ժողովը իր „անկախութեան յայտարարութեան“ մէջ—յոյն ազգը վկայ է կոչում երկինքն ու երկիրը, որ չնայած օսմանցիների զարհուրելի լծին, որ սպառնում էր բնաջինջ անել նրան, ապրում է տակաւին։ Այդ գազան բռնաւորները իրենց տմարդի և աւերիչ շահատակութիւններով ստիպեցին յոյն ժողովրդին զէնքի դիմել։ Այս պատերազմը ազգային է և սուրբ է։ Մենք կուզենք վերստանալ մեր դիրքը քաղաքակիրթ ազգերի գերդաստանում։

Ի՜նչ. միթէ՞ յոյները դատապարտւած էին յաւիտենական սարկութեան, շարունակական հարստահարումների, բռնութիւնների և ջարդերի... Մի քանի բարբարոս հօրպաների կոպիտ ուժը կարող է՞ր միմիայն արդարանալ միջազգային իրաւունքի առջև... Մենք ընդհանուր համաձայնութեամբ գնում ենք նետաճելու մեր ազատութիւնը և հաստատապէս որոշած ենք կամ ձեռք բերել այն կամ թէ թաղել մի անգամ ընդմիշտ մեր դժբախտութիւնները մի մեծ աւերակի տակ, որ արժանի է մեր ծագումին...

***

Օգնութիւն չէր հասնում։ „Սրբազան Դաշնակցութեան“ բռնած դիրքը սաստիկ դժւարացնում էր յունական շարժման յաջողութիւնը։ Աւստրիան բացարձակապէս հակառակ էր որևէ միջամտութեան. Մետերնիխ կարբոնարիզմի ուրուականն էր տեսնում յունական ձրգտումներում։ Խիստ փափուկ դրութեան մէջ էր ցար Ալէքսանդր I։ Մի կողմից նա կ'ուզէր խրախուսել Բալկանեան ազգերի յեղափոխական կռիւը, ազատել նրանց տաճկական տիրապետութիւնից, անդամահատել այդ-պիսով սուլթանների կայսրութիւնը և բարեյաջող դէպքում տիրանալ նրան։ Այդ էր պահանջում Ռուսաստանի աւանդական շահը. այդպէս էր հրահանգում Պետրոս Մեծի հռչակաւոր կտակը, որ այնքան յաճախ յիշատակւում է դիւանագիտական պատմութեան մէջ և որ իրօք ծուծն է կազմում Արևելեան վիթխարի հարցի։ Միւս կողմից նա գարշում ու սարսափում էր յեղափոխութիւններից և իբրև անդամ „Սրբազան Դաշնակցութեան“, նա պիտի հոգար ամենախիստ միջոցներով հանգցնել յեղափոխութեան հրդեհը, ուր որ էլ երևար այն։ Ահա թէ ինչու դեռ 20-ական թւականներից առաջ՝ Հէթէրիայի կողմից Ռուսաստան ուղարկւած Կաֆիրինոսը, որ պիտի խնդրէր օգնութիւն կոմս Կապոդիստրայից և նրա միջոցով՝ Ալէքսանդր կայսրից, ստիպւեց ձեռնունայն վերադառնալ, առաջ բերելով յոյների մէջ ընդհանուր յուսահատութիւն։ Ահա թէ ինչու 1821 թւին, երբ Իպսիլանտին՝ արդէն գրաւած Իաշա քաղաքը, յատուկ պատգամաւոր ուղարկեց Ալէքսանդր կայսեր մօտ, վերջինս ոչ միայն մերժեց յոյներին օգնութեան հասնելու առաջարկը, այլ և խոստացաւ սուլթանին „իր աջակցութիւնը՝ խռովարար յոյներին ճնշելու համար“։ Ահա թէ ինչու Ռուսաստանը տեղից չշարժւեց նոյնիսկ այն ժամանակ, երբ փոքր յետոյ թիւրք և ռուս կառավարութեան յարաբերութիւնները այնքան լարւեցին, որ ռուսաց դեսպան Ստրոգանովը ստիպւեց հեռանալ Պոլսից։ Նոյն թշնամութեամբ էին վերաբերում յունական շարժումներին և միւս պետութիւնները։ Այդպէս, օրինակ, 1823 թւին, երբ Վերոնայում տեղի ունեցած դեսպանաժողովին ներկայացան Յունաստանի պատգամաւորները, պետութիւնների ներկայացուցիչները նրանց լսել անգամ չուզեցին և որ-

համարհանքով ճանապարհ դրին։ Այդ դրութիւնը տևեց մինչև 1826 թիւը, երբ վերջապէս յոյների օրհասական կռիւը հարկադրեց Ռուսաստանին նախընտրել իր մասնաւոր շահը և հանդիսաւոր կերպով խզել իր կապը „Սրբազան Դաշնակցութեան“ հետ։

Յոյների արդար դատը բուռն համակրութիւններ էր վաստակում եւրոպական հանրային կարծիքի մէջ։ Թիւրքական գազանութիւնները ցասման ու զայրոյթի փոթորիկ յարուցին արևմտեան երկրներում։ Երիտասարդ Եւրոպան՝ յուսախաբ, կաշկանդուած իր հայրենիքի մէջ՝ մխիթարում ու ոգևորում էր տեսնելով, թէ ինչպէս հեռու արևելքում ժայթքել է ազատութեան հրաբուխը... Մի երկիր, որ եղել է երբեմն քաղաքակրթութեան որրան, այժմ նրան վերածում էին աւերակների կոյտերի։ Մի ժողովուրդ, որ ունեցել է փառահեղ անցեալ և որ իբրև կրող քրիստոնէական քաղաքակրթութեան, մարանչում էր ասիական ամենապժգալի բռնապետութեան դէմ... Ահա թէ ինչն էր բորբոքում եւրոպացիների հետաքրքրութիւնն ու կարեկցութիւնը։ Սկսեց մի հոյակապ շարժում ի նպաստ Յունաստանի։ Բայրոնի ու Շատոբրիանի պէս գրական աստղեր գլուխ անցան այդ շարժման։ Եւրոպայի բազմաթիւ կենտրոններում հաստատուեցին յունասէր կոմիտէներ, որոնց կոչումն էր՝ պրոպագանդ անել յունաց ազատութեան համար — և պրոպագանդ՝ ոչ միայն խօսքով։ Լօնդոն, Մարսէլ, Ժընէվ, Ցիւրիխ, Շտուտգարտ, Մինխէն և այլն դրամական առատ ժողովարարութիւններ էին անում յոյն հայրենասէրների համար և նոյնիսկ կամաւորների խմբեր էին ուղարկում։ Բայրոն ինքն անձամբ գնաց Յունաստան, իր ամբողջ կարողութիւնն ու անձը նուիրաբերելու յունական դատին, և այնտեղ էլ մեռաւ (1824)։ Այդ մահը խոր, անդարմանելի սգով համակեց ամբողջ Յունաստանը, իսկ Անգլիայում աւելի ևս ուժ տուեց հելլենասէր շարժումին...

Սուլթան Մահմուդ սպառել էր իր բոլոր միջոցները և օգնութեան կանչել Եգիպտոսի փաշային, իր վասալին։ Յոյները թէև ընկճուած, արիւնաքամ՝ շարունակում էին դիմադրութիւնն ու յարձակումները։ Թիւրք խուժանի անլուր վայրագութիւնները, հայրենիքի աւերումը, հարիւր հազար նահատակները և ընդհանուր ողբն ու արտասուքը կսկծացնում էին նրանց, բայց չէին սարսափեցնում։ Վրէժխնդրութեան կրակով վառուած՝ նրանք դեռ շատ անգամ կարողացան նեղը ձգել տաճիկներին, շատ յաղթութիւններ տարան։ Բօցարիս, Կանարիս, Միաուլիս դիւցազները իրենց փայլուն քաջագործութիւններով դարձան թիւրքերի սարսափ և քաղաքակիրթ աշխարհի հիացման առարկայ... Միսօլունգիի յիշատակելի ճակատամարտը վերջին յուսահատական ճիգն էր։ Մօտ 15,000 յոյն բնակիչներ, որոնցից մօտ 6,000-ը զինուորներ, ամրացան իրենց վերջին ապաստանում — Միսօլունգի, որ և պաշարուեց Իբրահիմ փաշայի զօրքերով։ 8 ամսուայ հերոսական դիմադրութիւնից յետոյ՝ բերդն ընկաւ ուժասպառ... և Միսօլունգիի անկման ողբերգը կսկծալի շառաչով անցաւ քաղաքակրթուած աշխարհի վրայից, ցնցեց յունասէրների և ազատութեան բոլոր բարեկամների սիրտը։ Ապաստանուածներից մօտ 10,000 հոգի խողխողուեցին, իսկ կենդանի մնացածները վաճառուեցին որպէս գերիներ...

Անցաւ մի տարի, ծանր, յուսահատ, մահաշունչ տարի, երբ սովը՝ միացած թշնամու անկարագրելի անգթութեան հետ, անխնայ կոտորում էր յոյներին։ Վերջապէս բախտը ժպտաց։ Փայլեց յուսոյ ճառագայթը Անգլիայից, ուր կառավարութեան ղեկը անցել էր այդ միջոցին ազատամիտ Կաննինգի ձեռքը։ Նա, հրաժարուեց մետերնիխեան քարացած ու մահաբեր ֆորմուլներից և որոշեց միջամտել ի նպաստ յոյների... Անգլիային միացաւ Ֆրանսիան, և երկու պետութիւնները շտապեցին համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ (վախենալով մի գուցէ նա միայնակ միջամտէ) ու երեքով ստորագրեցին 1827 յուլիս 6 Լօնդոնի դաշնագիրը, որ առաջին քայլն էր դէպի Յունաստանի անկախութիւնը։ Թիւրքիան Աւստրիայի աջակցութեան վրայ յենուելով՝ յետ մղեց դաշնագիրը, և մի քանի շաբաթուայ ապարդիւն բանակցութիւններից յետոյ, երեք պետութիւնների նաւատորմերը երևացին Նավարինի առջև, ուր գտնւում էր թիւրք-եգիպտական միացեալ նաւատորմը։ Պատերազմը երկու ժամ միայն տևեց և վերջացաւ թիւրքերի լիակատար պարտութեամբ։

Յունաստանը ազատուած էր։

***

Յոյներից յետոյ, ամենաարիւնոտ և ամենայուզիչ մարտիրոսագրութիւնն ունեցան Բալկանեան ժողովուրդների մէջ—բուլգարները։

Եւ որքա՞ն նա նման է հայկականին... Ընդհանուր առմամբ դա նոյն լացող ու տանջալի պատմութիւնն է, որ շարունակւում է քաղաքական անկախութիւնը կորցնելուց ի վեր մինչև 1878-ը, երբ Բուլգարիան ազատագրուեց Ռուսաստանի ձեռքով։

Իրենց քաղաքական անկախութիւնը բուլգարները կորցրել էին հայերի հետ գրեթէ միաժամանակ, 1396-ին։ Դա բուլգար պատմութեան ամենասև թուականն է, երբ Վիդդինի անկումով այդ ժողովուրդը ընկաւ վերջնականապէս թիւրքաց լծի տակ։

Այնուհետև այդ պատմութիւնը ծայրէծայր արտասուք է և տառապանք։ Ահագին թւով բուլգարներ մահմեդականութեան գիրկն անցան, և այսօր տակաւին մնում են այդ բուլգար-մահմեդականները հիւսիսային Բուլգարիայում։ Արու զաւակները պարբերաբար յափշտակուեցին բուլգար ընտանիքներից, ենիչերիների գնդեր կազմելու համար։ Բուլգարիայի անունն անգամ չնչուեց, դարձաւ „Ռումէլիի բեյլէրբէյութիւն“։ Բացառութիւն կազմեցին մի քանի վայրեր, որ պահպանեցին կիսանկախ վիճակ, իրենց վոյեվոդների իշխանութեան տակ (վոյեվոդը մօտաւորապէս մեր Զէյթունի իշխանի տիպն է), հարկատու Բ. Դրան։

Ապստամբութեան փորձեր արին բուլգարները մերթ ընդ մերթ։ Բայց միշտ անաջող։ Մի մասը գաղթեց դէպի Տրանսիլվանիա։ Մի մասը դարձաւ հայդուկ։ Յոյն կլէֆտների պէս լեռներն ապաստանելով, բուլգար հայդուկները դիմադրում էին մի յայտնի չափով թիւրք իշխանութիւններին։

18-րդ դարու վերջերում և 19-րդի սկզբներում

երկիրը ահռելիօրէն տանջուում էր մի սոսկալի պատուհասից։ Կիրջալի կոչուած աւազակները անխնայ աւերում էին բուլգարական հայրենիքը։ Վիդդինի մէջ հաստատուած Բաշվան օղլի անուն փաշան ըմբոստ էր հռչակել ինքզինքը և յայտարարել էր իր գաւառում անկախութիւն։

Սակայն հաստատուած տառապանքի մէջ կամաց-կամաց արթնացաւ ազգային ինքնագիտակցութեան ոգին։ Յոյների, սերբերի տարած յաղթանակները, եւրոպական միջամտութիւնը մեծապէս խրախուսում էին բուլգարներին։ Դժբախտաբար, ընդօրինակել յոյներին ու սերբերին՝ նրանք չէին կարող։ Հարաւային Բուլգարիան շատ էր մօտիկ Կ. Պոլսին, իսկ հիւսիսայինը — մի ընդարձակ դաշտավայր, որ բնաւ յարմար չէր հայդուկային կռիւների համար։ Այլ և այլ ժամանակ „ռայեան“ փորձեց միանալ յաղթական ռուսներին (1806-ին, 1829-ին), բայց բնաւ օգուտ չունեցան „Մոսկովի“ հակաթիւրք արշաւներից։

Անկարող լինելով ֆիզիկական դիմադրութիւն ցոյց տալու, բուլգար հայրենասէրները, ճարահատեալ, կենսրօնացրին իրենց ուժերը մաւոր կրթութեան, դպրոցների վրայ։ Փորձ արին նոյնիսկ (այդ կէտում ևս զարմանալի նմանութիւն հայ ու բուլգար պատմութեան մէջ)—փորձ արին նոյնիսկ յարելու պապի, կաթոլիկութեան հովանիին...

1865 թուականից ի վեր Թիւրք կառավարութիւնը սաստկացրեց իր ճնշումները։ Բուլգարիան դարձաւ ապաստան արիւնարբու չէրքէզ գաղթականների, որոնք չկամենալով մնալ ցարի իշխանութեան տակ, փախչում էին Կովկասից և սիրալիր ընդունելութիւն գտնում Թիւրքիոյ մէջ։ Մի կատաղեալ զուլում եղաւ այդ գաղթականութիւնը բուլգար ժողովրդի համար։ Գիւղացին„ աշխատաւորը կրում էր ամեն օր ծեծ ու անարգանք այդ նորեկ բարբարոսների ձեռքից։

Տառապանքի հետ աճեց գրգռումն ու դժգոհութիւնը։ Հայդուկային պարագլուխները և յեղափոխական առաքեալները ուժ տուին իրենց պրոպագանդին։ Հրապարակ նետուեց Սարկաւագ Լեվսկին, որ մի շարք հերոսական թռիչքներից յետոյ, ընկաւ թշնամու ձեռքը և կախաղան հանուեց (1873 թ.)։ Կային յեղափոխական ասպարէզի վրայ ուրիշներ ևս, Պանայոտ Հետով, Բակովսկի, բանաստեղծ Բոտեվ և այլն։ Ցանցառ էր յեղափոխական բանակը, բայց բարձր էին այդ դէմքերը իրենց ոգով ու խառնուածքով, իրենց կատաղի ու ահարկու վրէժխնդրութեամբ։

Եկան գործելու օրերը։ Ժողովուրդը, սակայն, պատրաստ չէր։ Բայց ժամանակը շտապում էր։ „Ա՛յժմ կամ երբէք“—գոչում էին բուլգար անդրանիկ առաջամարտիկները. Բօսնիա-Հերցեգը արդէն պարզել էր ապըստամբական դրօշը (1875 թ.)։ Բուլգարիայի սակաւաթիւ լեգէօնը փորձեց արձագանք տալ և ձգել հրդեհը ամբողջ երկրի մէջ։ Սակայն, դա եղաւ կոտորածի հրդեհ, ոչ ապստամբութեան։ Ըմբոստանալու փորձերը թոյլ էին, ողորմելի։ Բուլգարիան չունեցաւ բնաւ ապստամբութիւն։ Բայց խաղաղ ժողովրդի արիւնը հոսեց առատօրէն։ Սուլթանը թափեց 10,000 բաշիբոզուկներ Բուլգարիոյ վրայ։ Տեղի ունեցան Քիոսի գազանութիւնները, աւելի ևս „կատարելագործուած“, հասցրէած նրբութեան գագաթնակէտին... 1876 թուականն էր։ Միմիայն փոքրիկ Բատակի մէջ (բուլգարական Սասուն) 7000 ազգաբնակութիւնից բաշիբոզուկները խողխողեցին 6000 հոգի։ Մի քանի օրւայ մէջ 79 բուլգար գիւղեր հրի ու սրի ճարակ եղան, առնւազը 15,000 հոգի սպանուեցին, 80,000 մնացին անտուն, անապաստան։ Բուլգարիան մի ահագին սպանդանոց էր։

Ռուսաստանը հաստաւ, վերջապէս, իր ցեղակիցների օգնութեան։ 1877 թ. յուլիս 3-ին ռուսաց զորքը անցաւ Դանուբը և մի շարք դժուարին ու արիւնահեղ կռիւներից յետոյ, եկաւ կանգնեց Կ. Պոլսի դռներին։ Անգլիան halt! գոռաց արշաւող կօլօսին. տեղի ունեցաւ Բերլինի վեհաժողովը, ուր եւրոպական դիւանագիտութիւնը, ռուսաց առաջխաղացութիւնը խափանելու համար՝ յեղաշրջեց Սան-Ստեֆանօի ռուս-Թրքական դաշնագիրը և բաժանեց բուլգարական երկիրը երեք մասի, մի խոշոր մասը յանձնելով նորէն Թիւրքիային։

Դիզրայէլիի և լորդ Սոլսբիւրիի չարաղէտ ձեռքով կատարուած այդ յօշոտումն էր, որ 34 տարի յետոյ ծնունդ տուեց ներկայ պատերազմին...

Մ. Վ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

VII

ՎԻՐԱԾՆՈՒԹԻՒՆԵՐԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐՔԻՄԵՏԵԱՆ ՀԱՅՏՐՈՒՄԸ

ՄԻՆՉԴԻ 60-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

—

Անցնենք արևմտեան Հայութեան։

Տարբեր է ընդհանուր պատկերը ցեղի երկու հատուածների մէջ։ Մինչդեռ կովկասեան Հայաստանը, Դաւիթ բէկի օրերից սկսած մինչև Ղերսէս Աշտարակեցի, պարբերաբար ալէկոծւում էր ռազմի որոտումներով ու հայ տարրի ըմբոստացումով, — օսմանեան Հայաստանի մէջ յարատևում էր ստրկութեան միապաղաղ գիշերը, տիրում էր խոր, գերեզմանային լռութիւն։

Սակայն, երեսնական թուականներից ի վեր, այնտեղ ևս խզւում է այդ մահաբեր լռութիւնը, թոյլ, վեհերոտ բախումներով սկսում է գործել հայոց կեանքի զարկերակը,—և այնուհետև ազգային ինքնաճանաչողութեան ու վիրածնութեան հոսանքը ընթանում է Թիւրքիոյ մէջ աւելի արագ տեմպով, քան կովկասեան հայութեան մէջ։

Իրրև աւելի նպաստաւորուած աշխարհագրական ու պատմական պայմաններից՝ ռուսահայերը, ճիշտ է, համեմատաբար աւելի ուժեղ էին իրենց ռազմային կորովով և ըմբոստութեան թռիչքներով ընդդէմ իսլամ

տիրապետութեան, բայց և միւս կողմից՝ նրանց մէջ անհամեմատ աւելի թոյլ էր ազգային իմացական կուլտուրան, լեզուի, պատմութեան, գրականութեան մշակութիւնը, անհամեմատ աւելի թոյլ ու ծանծաղ էր ազգային ինքնագիտակցութեան ոգին։ Վերջինը, ընդհակառակը, շատ աւելի շեշտուած էր արևմտեան հայերի մէջ, շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք էլ, օգտուելով հաղորդակցութեան դիւրութիւններից, մտան վաղաժամ շփման մէջ եւրոպական մեծ կենտրոնների հետ, կենտրոնացրին վաղաժամ իրենց ձիգը մտաւոր վերածնութեան աշխատանքի վրայ, արծարծեցին մայրենի ու գրական լեզուի անհրաժեշտութիւնը, արծարծեցին հայրենիքի գաղափարը, մշակեցին, մի խօսքով, ազգայնութեան անհրաժեշտագոյն գործօնները... Մենք քաշում ենք զուգահեռակը մինչև 60-ական թուերը, մինչև այն խոշոր, նշանակալի շրջանը, որ, կարելի է ասել, նոր դարագլուխ կազմեց երկու ազգային հատուածների քաղաքակրթական գոյութեան մէջ։ Մինչդեռ արևմտեան հայութիւնը անցեալ դարու 50-ական թուականների վերջերում ունէր արդէն բաւական ճոխ գրականութիւն ու մամուլ, որ լինելով հանդերձ ծանծաղամիտ, մակերեսային, կրթում էր սերունդները ազգայնութեան նշանակի տակ, դաստիարակում էր սերունդները իրենց մայրենի բառբառով — այդ միևնոյն ժամանակաշրջանում ռուսահայոց մամուլն ու գրականութիւնը նոր էր միայն սաղմնաւորուում, նոր, կենդանի, աշխարհաբար լեզուի հետ։

Երկու հատուածների պատմական էւոլիւսիոնի օրէնքը այսօր ևս նոյնն է մնում։ Մեր օրերի թիւրքահայը (թիւրքահայը առհասարակ, միջին թիւրքահայը) անհամեմատ աւելի ուժեղ է իր հայրենական մշակոյթով, հայ լեզուի, պատմութեան, գրականութեան ծանօթութեամբ, աւելի ուժեղ է ազգային կուլտուրայի նախանձախնդրութեամբ, քան թէ միջին ռուսահայը։ Սակայն երբ վրայ է հասնում տագնապը, երբ օտար բռնաւորի գիշատիչ հարուածների տակ վտանգուում է այդ ազգային հաւաքական ստացուածքը, — ռուսահայը աւելի ուժով ու վճռականութեամբ է ըմբոստանում ազգայնաջինջ հարուածների դէմ, ունենալով իր դիմաց աւելի ահեղ բռնապետութիւն...

Անտագոնիստներ, հակոտնեաներ չեն, սակայն, երկու արիւնակից հատուածները։ Ընթանալով իւրաքանչիւրը իր յատուկ աւազանով, նրանք երկար ժամանակից ի վեր աստիճանաբար ու փոխադարձաբար լրացրել են իրար, իւրաքանչիւրը ձգտելով փոխառնել միւսից այն՝ ինչ որ իրեն պակասում է, ինչ որ միւսի սեփականութիւնն է։ Թիւրքահայը կամաց-կամաց մարզուեց քաղաքական պայքարի մէջ, ռազմական դպրոցում, ռուսահայը կամաց-կամաց մարզուեց հայրենագիտութեան, մայրենի լեզուի և այլ ազգային առաքինութիւնների մէջ, — և այդպիսով հայութեան կեանքի անիւը ասպիճանաբար հարթելով, մակարդակելով (niveler) տարբերութիւնները, առաջնորդում է ճակատագրօրէն դէպիմի ապագայ, ուր երկու մեծ հայկական հատուածները, արևելեանն ու արևմտեանը, դարերով զատուած ու խորթացած, պիտի միանան ի վերջոյ մէկ ընդհանուր աւազանի և մէկ ընդհանուր ազգայնաշէն հոսանքի մէջ...

***

XIX-րդ դարու սկզբում, շնայեած Մխիթարեանների երկարատև ու վաստակաւոր գործունէութեան, շնայեած և Ցուրնը-ֆօրների ու Ժօբերների մեծահատոր գրուածքներին ու ներբողալի վկայութիւններին հայ ցեղի վերաբերմամբ, — հայութիւնը իբրև ազգ տակաւին անծանօթ էր Եւրոպային։

Եւրոպան ճանաչում էր հայերին կ. Պոլսից, ճանաչում էր, իբրև ցիր-ցան վաճառականների մի հրէատիպ հաւայնք, — վաճառականների՝ որոնց համար ուրիշ ոչինչ գոյութիւն չունէր, բացի իրենց նեղ-եսական շահերից։ Հրէաների պէս հայրենազուրկ, ազգայնազերծ — և նրանց պէս՝ տարագիր, թափառական...

„Gli Armeni, nazione proscritta e vagabonda, senza patria e senza asilo" *)...

„Հայերը — մի վտարանդի և թափառիկ ազգ, անհայրենիք և անապաստան"։

Իտալացի պատեր Դամասի այս յոռետես յայտարարութիւնը գուցէ ճշտօրէն թարգմանում է այն ժամանակներում տիրող կարծիքը հայ ազգի մասին... Այդ խօսքերը արտասանուում էին դեռ 1861-ին, երբ հայ տարրը պատկառելի առաջադիմութիւն էր արել Թիւրքիոյ ու Կովկասի մէջ։

Հայ ժողովուրդը գոյութիւն չունէր եւրոպական աշխարհի աչքում, Հայաստանը կ. Պոլսում էր, Զմիւռնիայում, վաճառաշահ քաղաքներում։

Պոլիսը թիւրքահայ ժողովրդի կենտրոն-„ուզեղն" էր, ինչպէս և. շարունակում է համարել տակաւին այսօր։

Գաւառը — լո՛ւռ, խաւար, անկենդան. Պոլիսը — եռուն, աշխոյժ, կենսալի։ Այնտեղ ուժգին բախում էր առևտրական կեանքի զարկերակը և հայ տարրը յոյնի հետ գործօն ջիղն էր այդ առևտրի։ Այնտեղ ամուր հաստատուած էր իր շքեղ ապարանքներում „ազգի աղը", էֆէնտիական դասակարգը — ամիրայութիւնը։ Հայ հինաւուրց ազնուականութեան անփառունակ մի բեկորն էր դա։ Իշխան Ցատեան այսպէս է նկարագրում նրա ծագումն ու էութիւնը 60-ական թուականների „Revue des Deux Mondes"-ի

*) P. Damas. Relazione intorno allo stato religioso degli Armeni, Milano 1861. (Զեկուցագիր հայոց կրօնական վիճակի շուրջը)։

մի ուշագրաւ յօդուածի մէջ, „Ժամանակակից Հայ Հասարակութիւնը“ խորագրով.

„Հայկական այդ արիստոկրատիայի անդամները գրեթէ բոլորն էլ պատկանում են ազնուական դերդաստանների, որոնք Բագրատունեաց արքայատոհմի անկումից և մայրաքաղաք Անիի դրաւումից յետոյ (1169 թ.), իրենց 70,000 ազգակիցների գլուխ անցած, եկել են ապաստանել Կ. Պոլսում։ Այդ ընտանիքների մեծ մասը կամաց-կամաց մարեցին, բայց նրանց կողքին բարձրացան ուրիշները, որոնք նման վենետիկեան պատրիկներին, վաստակել էին իրենց հարստութիւնը առևտրի և բանկի մէջ...

„Այդ դասակարգը կազմեց իր միջից մի տեսակ գերազոյն Ազգային Խորհուրդ... Պատրիարքը ազգի օրինական պետն էր օսմանեան նուաճումից ի վեր. սակայն ազգային ժողովը կամայականօրէն, բռնի կերպով իր ձեռքն էր առնում Պատրիարքի իշխանութիւնը և հետզհետէ նուազեցնում ու նսեմացնում նրա արժանապատուութիւնն ու հմայքը... Դա մի քմահաճ օլիգարշի էր... Եւ Ազգային Խորհուրդը մշտնջենական օճախ էր երկպառակութիւնների ու դաւերի՝ *)...

Այդպէս էին հայ ամիրաները։ Իբրև հմուտ սեղանաւորներ և մանաւանդ սարրաֆներ, փաշաների ու այլ մեծերի ամենախոնարհ յանձնակատարներ՝ նրանք կարողացել էին ձեռք բերել ահագին հարստութիւն և դրա շնորհիւ՝ դիրք ու ազդեցութիւն, անգամ պալատում, թիւրք մեծերի մօտ՝ խոնարհ սպասաւոր, իրենց հարազատ միջավայրում — գոռոզ ու հրամայող.. Հայոց պատրիարքները խաղալիք էին նրանց ձեռքում։ Նրանք կարող էին քմահաճօրէն ընտրել և հրաժարեցնել պատրիարքին։ Ոչ մի յարգանք դէպի ժողովրդի, միւս դասերի իրաւունքները. ժողովուրդը առհասարակ հաշիւ չէր այդ դաժան ժամանակներում...

Եւ, սակայն, հայ ամիրայութեան սոցիալական պատկերը չի ներկայանում մեզ, իբրև. միանգամայն սև, յոռի, բացասական։ Իր բռնաւոր և արատաւոր յատկութիւնների հետ՝ նա ունեցել է և մի քանի դրական գծեր, կատարել է յայտնի չափով կուլտուրական, ազգօգուտ դեր։ Եղել են լաւ ամիրաներ, որ աչքի են ընկել իրենց շինարար գործունէութեամբ, խրախուսել են գրագիտութիւնն ու ազգային կրթութիւնը հայերի մէջ, գործադրել են այդ նպատակով իրենց կարող ազդեցութիւնը կառավարութեան մօտ։

Դպրոցներն ու գրագիտութիւնը արդէն իսկ մի տեսակ տնտեսական անհրաժեշտութիւն էին։ Եւրոպական նորածիլ մեքենային արդիւնագործութիւնը ուժգին զարկ էր հաղորդել մերձաւոր արևելքի առևտրին ու փոխանակութեան և հայը, ինչպէս ասացինք, ամենամեծ դերակատարներից մէկն էր ապրանքային այդ ընդարձակ փոխանակութեան մէջ։ Հարկ էր տաճկերէնի ու եւրոպական լեզուների հետ տարածել և հայերէնի ուսուցումը։

Եւ հիմնւում են կամաց-կամաց հայ դպրոցներ, մէկը նոյնիսկ ճեմարանական ծրագրով Սկիւտարում (1838 թ.), ամիրայական հովանիի տակ։ Հաստատւում են տպարաններ ու գրադարաններ, հրատարակւում են գրքեր ու հանդէսներ։ Միաժամանակ բազմաթիւ հայ երիտասարդներ — գլխաւորապէս մեծատան զաւակներից — ղրկւում են Եւրոպայի հմտաբարները՝ գործնական գիտելիքներ ձեռք բերելու և հայրենի միջավայրը ներմուծելու նպատակով։

Այդ շինարար ճիգերի մէջ, մի յայտնի դեր ունէր, անտարակոյս, և հայրենասիրական քնազդը։ Հայ ամիրան չէր կարող չզգալ, չտեսնել իշխող տարրի լեզուական ու կուլտուրական յետամնացութեան հանդէպ՝ իր սեփական լեզուի ու պատմութեան, իր ազգային դարաւոր կուլտուրայի գերազանցութիւնը *)։

*) Ուշագրաւ է այդ „ազգային նախանձախնդրութիւնը“ աղայական դասակարգի մէջ։ Կովկասահայ աղայութիւնը գրեթէ բոլորովին զուրկ մնաց այդ առաքինութիւնից, որը թիւրքահայ իրականութեան մէջ չի կարող վերածուել ամբողջապէս ամիրայութեան „դասակարգային մտահոգութիւններին“։ Կովկասահայ աղայութիւնը գրեթէ en bloc, հազուագիւտ բացառութեամբ, մնաց միշտ օտարացած և օտարամոլ մի տարր, անտարբեր դէպի ազգ, լեզու, պատմութիւն ու գրականութիւն։ Այդպէս էր նոյն Կովկասում և հայ փողատէր դասակարգը, բուրժուազիան, իր ահագին մեծամասնութեամբ։ Այդ դասակարգը, սակայն, ժամանակի ընթացքում ենթարկւեց մի յայտնի էվոլիւցիայի։ Մասնաւորապէս վերջին ժամանակներում, ռէժիմի սիստեմատիկ ոտնձգութիւնների և մանաւանդ թաթար ու վրացական պրովոկատիոնների ու յարձակումների շնորհիւ, մեր փողային արիստոկրատիայի մէջ շեշտւում է—երբեմն ուժով—այդ ազգային նախանձախնդրութիւնը։ Նա խօսում է անգամ այնպիսի անհատների մէջ, որոնց միանգամայն օտար է հայ լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը։ Կովկասահայ բուրժուազիան՝ թէ տնտեսական մրցման կրկէսում, նաւթային մայրաքաղաքի մէջ (նաև ուրիշ կենտրոններում) և թէ քաղաքային Դումաների, Ազգաւորների մէջ, այսօր աւելի քան երբ և իցէ հպարտ գիտակցութեամբ շեշտում է իր ազգութիւնն ու ազգային իրաւունքները միւս ցեղերի հակամարտ տարրերի հանդէպ... Եւ այդ խրոխտ գիտակցութիւնը—ո՞վ բախտի հեգնանք—նա պարտ է երեկոյ յաղթական կռիւներին վայրենաբարոյ հօրդաների դէմ, պարտ է այն յեղափոխական կազմակերպութեան, որին նոյն այդ բուրժուազիայի անուղղել իդեալոգները շարունակում են հալածել իրենց ապերախտ ու փոքրոգի չարութեամբ...

Արևմտեան Հայութեան մէջ այդ ազգային նախանձախնդրութիւնը գրեթէ ընդհանուր ու մշտնջենաւոր երևոյթ է, նրանով համակւած է թէ արհեստաւորն ու մշակը, թէ բուրժուան և ամիրան։ Եւ անգամ հեռաւոր դիտապօրաների, գաղութների մէջ, ազգութեան այն աննշան բեկորների մէջ, որ պատմական աւերիչ յորձանքներով դուրս են նետւել հայրենի երկրից հազարաւոր մղոններ հեռու,—անգամ այնտեղ՝ պահպանւել են յայտնի չափով այդ հայրենական ու ազգայնական ոգին, այդ իրաւացի հպարտութիւնը հարազատ ցեղի բազմադարեայ կուլտուրայով, նրա հինաւուրց լեզուով ու գրականութեամբ, նրա հինաւուրց հերոսներով ու նահատակներով...

*) *La Revue des Deux Mondes, 15 Juin 1867. La Société Arménienne Contemporaine. Par le Prince Mek. Dadian.*

Բացի այդ, կար մի ուրիշ հանգամանք, մի այլ գործօն, որ խթանում էր հայ ամիրայութեան, „ազգային հետաքրքրութիւնը“։ Դա թիւրքիոյ քաղաքական վիճակն էր, նրա մէջ ծայր տուող ճակատագրական տարրալուծման պրոցէսը... Համեմատաբար կրթուած և աչքաբաց հայ դասակարգը չէր կարող չխորհիլ իր ազգի ապագայ վերելքի մասին մի այդպիսի տագնապալի ժամանակաշրջանում, երբ իսլամական տիրապետութեան վերքերը բացուել էին լայնաբերան՝ թէ օսմանեան և թէ պարսկական աշխարհում, երբ կովկասեան հայութիւնը հերոսաբար կռուում էր պարսից բռնակալութեան դէմ՝ ներսէս Աշտարակեցու առաջնորդութեամբ, երբ հիւսիսից ու արևմուտքից, հզօր, քրիստոնեայ պետութիւններից գրեթէ անընդհատ տեղում էին սպառնալիքներն ու հարուածները „Հիւանդ մարդու“ պարանոցին, երբ վերջապէս, իր աչքի առաջ, իր դրացուր դրացին, յոյնը, մի շարք առնական ըմբոստացումներով թոթափում էր միանգամ ընդմիշտ օսմանեան բռնապետութեան լուծը...

Նոյն հայրենասէր ոգին ու շարժումը դանդաղ և երկչոտ քայլերով ճանապարհ էր հարթում հայկական հորիզոններում հայ կղերի թևերի վրայ։

Եւ „հայ կղեր“ ասելով՝ պիտի հասկանանք գլխաւորապէս Մխիթար աբբայի հոգևոր գերդաստանը։ Եւրոպայում հաստատուելով և ճիւղեր արձակելով դէպի հայրենիքի այլ և այլ կողմեր, Մխիթարեան շարժումը, կարելի է ասել, փոթորկեց հայ կղերի բորբոսնած ճահիճը, ազդեց, անտարակոյս, և լուսաւորչական կղերի վրայ, խթանեց նրան ևս կամաց-կամաց դէպի գործ, դէպի ազգաշէն աշխատանք։

Որքա՜ն սև էր և արտասուելի հայ կղերական անապատը՝ Մխիթարեան այդ կենսարար օվազիսի շուրջը։ Դարեր շարունակ աղօթքի և ապաշխարհութեան դասակարգը իր ձևով և յուսահատ մաքառել էր բռնատիրող հօրդաների դէմ, ապրել էր և ապրեցրել իր հօտը կրաւորական դիմադրութեամբ, ձգտել էր միշտ վառ պահել իր վանքերի լքաւեր մթնոլորտում հայ լեզուի ու գրագրութեան գէթ ողջ ու դողդոջուն ճրագը, ձգտել էր այդ ճրագով գէթ մասամբ փարատել շրջապատի ահաւոր և սրտաճաք խաւարը, յաղթահարել սև ուժերի համատարած ու ոճրանիւթ քաօսը և ի վերջոյ... հիւծուել էր, ուժասպառուել այդ դաժան ճիգերի տակ, ընկել էր բարոյապէս, խորասուզուել մի անարգ ու գռեհիկ մատերիալիզմի, մի նիւթապաշտ ու անդորրապաշտ, էպիկուրեան ճահճի մէջ...

Ահա թէ ինչպէս է նկարագրում հայ Գրիգորեան հոգևորականութեան վիճակը մի նշանաւոր գերմանացի ճանապարհորդ, Մորից Վ ա գ ն ե ր, որ անցեալ դարու 40-ական թուականներին մի քանի անգամ պատել է Հայաստանում (օսմանեան, ռուսական, պարսկական Հայաստանում) և ուշի ուշով ուսումնասիրել է մեր ժողովրդի ու հոգևորականութեան կենցաղը։

„Իշ-Քիլիսէի աբեղաները—ինչպէս որ դիտողը կը նկատէ առաջին իսկ հայեացքից—նոյնքան փճացած ու բթացած են բարոյապէս, որքան առհասարակ գրեթէ ամբողջ հայ լուսաւորչական կղերը։ Թանձրամած տգիտութիւն, բթամտութիւն, կասկածոտ վերաբերմունք դէպի եւրոպացին, շահասիրութիւն ու անբարոյականութիւն—դրանք են աչքի զարնող գծերը։ Գիտութեան խնամքը, երաժշտութիւնը, արուեստը, որոնք արևմտեան երկրների մէջ ուրախացնում ու գեղեցկացնում են վանական կեանքը—այդ ոլորը անծանօթ է նրանց։ Իրենց աղօթքի գրքերը անգիր գիտեն, բայց—ոչ մի ուրիշ ընթերցանութիւն։ Վանքի գրադարանը—100-ի չափ գրքեր, փոշու մէջ կորած՝ մնում են առանց գործածութեան։ Ինքը վանահայրը հայոց գրաբարն անգամ չգիտէ։

„Գեռնաքարշ, ստրուկ ու մուրացիկ՝ եւրոպացի կարևոր ճամբորդների հանդէպ—հայ աբեղաները ամբարտաւան են, բռնակալ, քարաւիրտ և ժլատ՝ հանդէպ իրենց հօտի, մասնաւորապէս չքաւոր հաւատակիցների։ Արտաքուստ՝ սիրով նրանք ընդունում են առաքիչի և ժուժկալ կերպարանք, մինչ ծածուկ մոլի, արատաւոր կեանք են վարում. այդպէս են հաւատացնում մեզ մարդիկ, որոնք երկար ապրել են հայ կղերի հետ։ Նախանձը տիրում է վանականների աշխարհում. բարեկամութեան, քրիստոնէական այլասիրութեան մասին հեռաւոր դաղափար անգամ չունին“ *)...

Այդպէս էր գաւառի մէջ, այդպէս էր կենտրոններում—Կ. Պոլսում՝ և Էջմիածնում։ Եւ ի՞նչ զարմանք՝ որ այդ կղերը յետագայում, սակաւաթիւ անհատական բացառութիւններով, միանգամայն բացասական դիրք բռնեց դէպի հայոց ազատութեան կռիւը, տալով միայն առատօրէն լրտեսներ և մատնիչներ...

Տարբեր էր Մխիթարեան կղերի պատկերն ու ուղղութիւնը։ Սաւերներ կան այդտեղ ևս, անտարակոյս։ Կրօնական, դաւանական սին ու ամուլ մարզանքներով տարուեցին Մխիթարեան հայրերն ևս և շատ ուժեր վատնեցին. սքօլաստիկ չոր ու ցամաք հրատարակութիւններով հեղեղեցին հրապարակը, նիւթական պատկառելի միջոցները չգործադրուեցին միշտ համաձայն իրականութեան պահանջների, խաւարի մէջ դեգերող ազգութեան ճշմարիտ կարիքների։

Բայց արդիւնքը, այնուամենայնիւ, ահագին էր։ Այդ դարաւոր գործունէութեան տենդենցը, ձգտումը համակրելի էր, նպատակայարմար և արդասաւոր։ Այդ տենդենցը նեղ իմաստով կղերական-դաւանական չէր, այլ աւելի՝ ազգային-քաղաքակրթական։ Այն մեծ աբեղան, որ 1717 թուին փոթորկալի արկածներից ճողոպրելով, գնաց անկելու իր դրօշը վենետիկեան ջրերի մէջ, նա եկել էր Եւրոպա՝ սպասաւորելու ոչ միայն Հռոմի ու կաթոլիկութեան դատին, այլև իր լքաւած ու տառապող ժողովրդին։ Ս. Ղազարի դրօշը գերազանցապէս ազգային էր, հայկական։ Այդպէս եղաւ և նրա

*) *M. Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.* էջ 284—85։

միւս ճիւղաւորութիւնը — Վիեննայինը։ Աւելի գրական՝ քան կրօնական ընկերակցութիւն։ Աղօթքի ու ժամասացութեան հետ — զուտ գիտական, ժամփոփ գործունէութիւն, հետազօտող, ուսումնասիրող աշխատանք՝ մեծասքանի գերանդորը առանձնութեան մէջ։ Թէ ինքնուրոյն ու թարգմանական երկերով, թէ մանաւանդ հայկական կլասսիկների բազմաթիւ հրատարակութիւններով՝ Միաբանութիւնը արծարծում էր սերունդների մէջ հայ լեզուի սէրը, հայոց պատմութեան ու գրականութեան ճաշակը և հարթում էր ճանապարհը ազգային վերածնութեան։

Եւրոպացի նշանաւոր ճամբորդները վաղուց ի վեր շեշտել են Մխիթարեան միաբանութեան այդ ազգային ու հայրենասիրական բնոյթը։ Նոյն վագները պատկառանքով է խօսում Մխիթարեան աշխատանքի մասին՝ հայկական կուլտուրայի արծարծման տեսակէտից։ Համակրական խօսքեր ունի և „մեծութեան երգիչը“, լորդ Բայրն, „ճնշուած և ազնիւ ժողովրդի այդ քահանաների“ մասին („*This men are the priesthood of an oppressed and a noble nation*“)—ժողովրդի, որ „կցորդ է եղել հրեաների ու յոյների տառապանաց ու հարըստահարութեանց, առանց սակայն առաջինների խըստասրտութեան և վերջինների ստրկամտութեան“ *)...

***

Քաղաքական մի նշանաւոր անցք երեսնական թուականներին եկաւ ուժգին զարկ տալու հայկական առաջադիմութեան։ Դա Թանզիմաթի հրատարակումն էր, որ ազատութիւն էր աւետում Թիւրքահպատակ քրիստոնեայ հաւատացեալներին։

Նա եկաւ, իբրև քաղաքական մի անխուսափելի անհրաժեշտութիւն։ Թիւրքիան կործանւում էր և փրկելու մէկ միջոց միայն կար—բարենորոգում, ռէֆորմ։ Քրիստոնեայ ժողովուրդները պակասում էին նրա կիսամեռ օրէնքից և պահելու մէկ միջոց միայն կար—հաւասարութիւն, իսլամի ու քրիստոնեայի իրաւական հաւասարութիւն։ Այդպիսով միայն՝ իշխող մահմեդականութիւնը կարող էր թերևս պատնէշ կանգնել արտաքին արշաւանքների դէմ, որ գալիս էին յարաճուն յորձանքներով խարխլելու սուլթանների դարաւոր տիրապետութիւնը։

Անհրաժեշտ էր մի Պետրոս Մեծ, որ բռնութեամբ խլէր հինաւուրց ու կաշկանդող աւանդութիւնները և ուղղէր պետութիւնը դէպի արևմտեան քաղաքակրթութիւն ու վերածնութիւն։ Սուլթան Մահմուդ գուցէ ամենից աւելի զգաց այդ տիրական անհրաժեշտութիւնը, քանի որ նրա օրով էին պայթել ամենածանր տագնապները, նրա աչքի առաջ էր հալւում ահագին կայսրութիւնը... Նա տեսաւ Յունաստանի ապստամբութիւնը, որ անհնարին եղաւ ճնշել հարիւր հազար յոյների կոտորածով ու երկրի աւերումով, նա տեսաւ Նավարինի ճակատամարտը, ուր երեք քրիստոնեայ պետութիւններ — Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան—միահամուռ գրոհ տուին Մահիկի դէմ, երեք ժամում խորտակեցին օսմանեան նաւատորմը, ազատելով ընդմիշտ Յունաստանը Թիւրքաց լծից։ Նա տեսաւ Ռուսաստանի յաղթական գրոհը հաւատակից Պարսկաստանի դէմ, տեսաւ նոյն Ռուսաստանի արշաւանքը դէպի Էրզրում... Թիւրքիոյ վիճակը դառնում էր կրիտիկական և Մահմուդ որոշեց ինքն անձամբ ստանձնել վերանորոգչի, Ազատարարի պաշտօնը... Տարուեց լիբերալ, ազատամիտ հովերով, մտցրեց Թիւրքիան պաշտօնապէս Ռէֆորմի ճանապարհը... Մտցրեց մի հարկու ժեստով — ենիչերիների խմբական կոտորածով *) (1826 թ)։

Պետրոս Մեծ չ'եղաւ, սակայն, Մահմուդը։ Նա զգում էր Եւրոպայի գերազանցութիւնը, բայց չէր ըմբռնում այդ գերազանցութեան գաղտնիքը։ Ընդօրինակում, ներմուծում էր լոկ արտաքին ձևերը, զգեստները, էտիկետը. թոյլատրում էր „ռայաներին“՝ պահպանելու իրենց ազգային զգեստը, թոյլատրում էր մինիստրներին և ուլեմաներին՝ նստել իր, սուլթանի, ներկայութեամբ և այլն։ Բուն արևմտեան քաղաքակրթութեան ոգին հեռու էր նրանից, ցեղի ու կրօնի բռնաւոր ազդեցութիւնը կաշկանդում էր խալիֆի առանց այն էլ սահմանափակ միտքը. նա անընդունակ էր շատ թէ քիչ բարձր թռիչքների, նա կամենում էր եւրոպացի լինել, բայց թիւրք էր մնում իր ամբողջ էութեամբ, թիւրք բռնաւոր ու միահեծան պետ։

Սկեպտիկ էին Եւրոպայի մէջ՝ թիւրքական վերածնութեան այդ առաջին փորձերի հանդէպ։ „Որքան աւելի եմ դիտում թիւրքերին, այնքան աւելի եմ համոզւում, որ շուտով նրանք պիտի մեռնին իրենց անկարողութեան բեռի տակ“ — ասում էր այն ժամանակ կոմս Օրլով։ Իսկ Աւստրիան 1839-ին առաջարկում էր արդէն Ռուսաստանին՝ բաժանել եւրոպական Թիւրքիան...

82 տարի պէտք եղաւ սպասել այդ բաժանումն իրագործելու համար — արդէն ոչ թէ Աւստրիայի ու Ռուսաստանի միջև, այլ մի բոլորովին նոր պետական համաստեղութեան՝ բալկանեան երիտասարդ դաշնակից-

*) *From the Letters of Lord Byron*, (2 *January* 1817).

*) 6—7,000 հոգի ջարդեցին կ. Պոլսում (1826, յունիս 15-ին), մօտ 16,000 աքսորեցին։ Այդպէս ոչնչացաւ զինուորական այն բարբարոս կաստան, որ անհաշտ հակառակորդ էր ամեն մի նորմուծութեան, որ պատուհաս էր դարերից ի վեր երկրի բոլոր ժողովուրդների, մասնաւորապէս քրիստոնեաների համար և որ յաճախ իր քմահաճ ու վայրագ միջամտութիւններով անդամալուծում էր կենտրոնական իշխանութեան կամքը։

ների մէջ... Եւ դարձեալ նոյն թիւրքական անկարողութիւնն էր, նրանց վարելու և վերածնելու անկարողութիւնը՝ որ ի վերջոյ շղթայազերծեց այս անօրինակ համաբալկանեան փոթորիկը, որի մէջ ընդմիշտ խորտակւում է կիսալուսնի եւրոպական տիրապետութիւնը...

Ենիչերիների կոտորածը եղաւ առաջին ու վերջին ժեստը սուլթան Մահմուդ մեռաւ, առանց լուրջ հետևանքի հասցնելու վերանորոգչական իր փորձերը։ Նրա որդին Աբդիւլ Մէջիդ, շարունակեց հօր աշխատանքը և, վերջապէս, 1839-ին հրատարակեց հռչակաւոր թանզիմաթը, խատը Շէրիֆը։

„Այսուհետև ազգային հասատութիւնները պէտք է երաշխաւորեն մեր հպատակների լիակատար ապահովութիւնը՝ կեանքի, պատուի և գոյքի։ Այդ արտօնութիւնները պիտի վայելեն ամենքը, ինչ կրօնի և աղանդի էլ պատկանին նրանք“ *)։

Այդպէս էր հռչակում սուլթանական մանիֆեստը. և այդ յայտարարութիւնը ինքնին արդէն մի յեղափոխութիւն էր։ Նա գալիս էր հիմնականապէս յեղաշրջելու Իսլամի աւանդական դօքտրինը, խախտելու սրբազնագոյն Շէրին, այդ քարացած կրօնական օրինագիրքը, որի մասին խօսել ենք արդէն և որի ըմբռնումով քրիստոնեան „անմաքուր“ է, ստոր ցեղ է, որ չի կարող վայելել մահմեդականի հետ հաւասար իրաւունքներ ու արտօնութիւններ...

Ռէֆորմը սկզբից իսկ պարունակում էր վիժման սաղմը։ Եւ ապագան ցոյց տւեց, թէ որքան երերուն էր ռէֆորմային այդ կառուցածքը... Հաւասարութեան գաղափարները օդ ցնդեցին, զարնելով Իսլամի գրանիտայ ապառաժին...

Այնուամենայնիւ, այդ վաղանցուկ ու վարդագոյն ցնորքները, արևմտեան հովերի այդ կարճատև տիրապետութիւնը ապարդիւն չ'անցաւ թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերի համար. նա խրախուսեց վերջինների գիտակից տարրերին, թևաւորեց նրանց յոյսերն ու երազները։

Հաւասարութեան գաղափարի նշանակի տակ ծայր տւեց թիւրքաց հայութեան մէջ դասակարգային կռիւ։ Հրապարակ եկան „էսնաֆները“ **)։ Հայ արհեստաւոր դասակարգն էր, որ ծառանում էր ամիրայութեան դէմ։ Ժողովուրդն էր, որ բեմ էր նետւում առաջին անգամ, իր դիրքի ու իրաւունքների գիտակցութեամբ։ Դա մեր փոքրիկ tiers état-ն էր, երրորդ դասակարգը, որ գալիս էր թօթափելու ամիրաների ճնշող խնամակալութիւնը և իր ձեռքն առնելու ազգային գործերի ղեկը։ Կղերը, որ նոյնպէս տառապում էր այդ քմահաճ աղայութեան ճնշումներից՝ միացաւ սկզբնեռում պայքարող էսնաֆներին, փաստաբանեց ռամկավարական դատը, ժողովրդային ներկայացուցչութեան սկզբունքը։ Մաթէոս պատրիարքը (յետոյ կաթողիկոս) ժողովրդի հետ համերաշխ մղեց պայքարը և ի վերջոյ աջողեց մտցնել էսնաֆների 14 ներկայացուցիչներին Ազգային Ժողով (ընդդէմ 16 ամիրայական երեսփոխանների)։ Ընտրովի չէին էսնաֆական այդ 14 ներկայացուցիչները, այլ ինքը պատրիարքն էր նշանակում. բայց և այնպէս, դա մի յուսալի սկզբնաւորութիւն էր։ 1844-ից արդէն կազմւում են պատրիարքարանին կցորդ՝ երկու ժողով, կրօնական և քաղաքական. վերջինը կազմւած 20 անդամից, որ ընտրւում էին ուղղակի էսնաֆներից։ Սակայն, դա դեռ ժողովրդական սկզբունքի լիակատար յաղթանակը չէր, քանի որ ամիրաները կաշառքով, ազդեցութեամբ կարողանում էին իրենց ուզած երեսփոխաններին առաջ տանել։

1848 թւին—անսովոր դէպք։ Էֆէնտիական կասը չէր ներում Մաթէոս պատրիարքին, որ նա մտցրել էր էսնաֆները Ազգային Ժողովի մէջ։ Եւ հզօր իրենց դասակարգային առանձնաշնորհումներով ու ազդեցութեամբ՝ ազգի խնամակալները շարունակեցին իրենց դաւերը ժողովրդական պատրիարքի ու նրա հօտի դէմ։ Այդ ազգադաւ պայքարի մէջ նրանք ստէպ դիմում էին անմաքուր, անթոյլատրելի միջոցների։ Ամեն տեղ—այդպէս... Ժողովրդային հոսանքը կանխելու և իրենց դիրքը փրկելու համար՝ առանձնաշնորհեալ դասակարգերը խտրութիւն չեն դրել միջոցների մէջ...

Ցոգնած ու զզուած այդ շարունակական դաւերից՝ Մաթէոս պատրիարքը որոշում է հրաժարական տալ։ Ամիրաները հասնում էին իրենց նպատակին։ Բայց ահա—անակնկալ։ Ժողովուրդը—հայ ժողովուրդը—ոտքի է կանգնում և հաւաքական ցոյցեր է սարքում։ 1848 թիւն էր... Փետրուարեան Յեղափոխութեան արձագանքն էր արդեօք, որ ամբողջ Եւրոպան սասանեցնելով, հասել էր մինչև Բոսֆորի ափերը... Ցամենայն դէպս, առաջին անգամն էր դարերից ի վեր, որ թիւրքահայ ժողովուրդը ըմբոստացումի հաւաքական ժեստ էր անում, թէկուզ և Հայաստանից դուրս, կ. Պոլսում, թէկուզ և հարազատ, արիւնակից բռնակալութեան դէմ...

Ցոյցի վայրն է Գում Գափուի մայր եկեղեցին։ Այնտեղ են պատրիարքի հետ երկու Ժողովները, այնտեղ է և ժողովրդի խուռն բազմութիւն, յուզւած, ելեքտրականացած։ Եւ հենց որ պատրիարքը յայտարարում է ամբիոնից իր հրաժարականը, լսւում է ամբոխի մէջ ցասման որոտ։ Բողոքի ճիչեր՝ ամեն կողմից։ Բազմութեան միջից առաջ են նետւում հռետորներ և ուժգին յորդորում են պատրիարքին՝ չհրաժարւել, շարունակել կռիւը։ Եւ երբ վերջինը անդառնալի կերպով պնդում է

*) Ed. Engelhardt, La Turquie et le Tanzimat. I r. p. 36.

**) „Էսնաֆ“ ասել է՝ արհեստաւորների, արդիւնաբերողների ընկերակցութիւն։

իր հրաժարականի վրայ, մէկը հանդիսականներից յայտարարում է, որ միակ արժանաւոր յաջորդն է նախկին Ցակոբ պատրիարքը։ Միահամուռ ու որոտագին հաւանութիւն.. Ցակոբը կը շարունակէ Մաթէոսին և կը նուաճէ „սահմանադրութիւն“ ու իրաւունք։

Ամիրայութիւնը տագնապի մէջ էր։ Ժողովրդական այդ անդրանիկ ու անակնկալ ցոյցի առջև՝ նրան մնում էր համակերպիլ։

Ճանապարհը հարթուած էր։ Կռիւը կ'երթայ այնուհետև յարաճուն թափով, մինչև կը յանգի 60-ական թւականների Սահմանադրութեան։ Այդ հրապուրիչ բառը շրջան էր անում ամենուրեք։ Նա նշանաբան էր և մարտակոչ։ Նա գալիս էր Մեծ Ցեղափոխութեան հայրենիքից, գալիս էր շարժելու ասիական մեծ ճահիճը, ուղղութիւն տալու հայկական Self government-ի, ինքնավարութեան ձգտումներին։ „Սահմանադրութիւնը“ դեռ սկզբունք էր, ծրագիր էր. նրա գործնական կիրառութիւնը դեռ կը պահանջէ երկար տարիներ։

***

Մինչ կեանքի մէջ կատարւում էին այդ ուշագրաւ վերիվայրումները քառասնական թւականների ազատաշունչ մթնոլորտում—հեռուն, Սէնի մրրկակոծ ափերին, մի խումբ հայ մտաւորականներ, հավասարանական նստարանի շուրջ, որոճում էին նոյն Սահմանադրութեան գաղափարը, երկնում էին հայրենաշէն ծրագիրներ, ականջ դնելով թէ ֆրանսիական և արևմտեան ահեղագոռ անցքերին և թէ հայրենի հորիզոններից հնչող ձայներին։ Նրանք կը դառնան յետագայում թիւրքահայոց առաջնակարգ գործիչներ և Ազգային Սահմանադրութեան գաղափարական կերտողներ։ Ովքե՞ր էին նրանք...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Մ Ա Մ Ա Ռ Լ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Սկսւում է մեծ հաշտեցարդարը։ Արևելքը, ամբողջ Եւրոպան ապրում են տագնապալի ու վճռական վայրկեաններ և անցքերի գահավէժ ընթացքի մէջ կամայ-կամաց կենդանի այժմէութիւն է ստանում նաև մեր յաւիտենական ու չարատանջ „գորդեան հանգոյցը“։

Բազմաթիւ կոչեր, յօդուածներ թերթերի ու հանդէսների մէջ, դիմումներ կառավարութիւնների մօտ, և ընդհանուր հետաքրքրութիւն ու իրարանցում հայութեան մէջ։

Հայկական ձգտումների ու բաղձանքների մէջ, բնականաբար, չկայ միութիւն, հոմերաշխութիւն։ Անհնարին է պահանջել մի այդպիսի հոմերաշխութիւն, երբ խնդիրը վերաբերում է թիւրքահայոց ապագային, նրա լաւագոյն տնօրինութեան։ Ոմանք հավատում են Ռուսաստանի հովանաւորութիւնը կամ գրաւումը իբրև միակ ելք և բաղձալի ելք. և ըստ այնմ էլ կոչ են անում Պետերբուրգին, յոյս տածելով նրա վեհանձն, մարդասիրական աջակցութեան վրայ։

Ուրիշները գտնում են, որ թիւրքահայ ժողովրդի ազգային և մարդկային բարգաւաճումը հնարաւոր է օսմանեան պետականութեան շրջանակներում, լայն ու խորունկ բարենորոգման պայմանով։ Եւ նրանք շարունակում են կոչ անել Բ. Դրան խղճին ու բանականութեանն։

Ուրիշները ապաւինում են բալկանեան նորակազմ Դաշնակցութեան, մասնաւորապէս Բուլգարիային, յուսալով, որ նա կուզենայ հրապարակ նետել հայկական ռէֆորմի ու ազատութեան խնդիրը։

Ուրիշները, վերջապէս, ինքնապաշտպանութիւն և ամենալայն ժողովրդային ինքնօգնութիւն քարոզելով հանդերձ՝ դիմում են թէ թիւրքիային և թէ միանգամայն Եւրոպային, ձգտելով կեանքի կոչել գիւանագիտական մեռած յօդուածները։

***

ՆՈՐ ՕՐԳԱՆ ՊԱՐԻԶՈՒՄ

Լրագրական բազմաթիւ յօդուածներից յետոյ, ահա մի նոր օրգան, որ լոյս է տեսնում Ֆրանսիայի մայրաքաղաքում, Պրեսսանսէի և Վիկտոր Բերարի խմբագրութեամբ և որ նուիրուած է հայկական դատին։ Նրա անունն է—„Արևելեան ժողովուրդների համար“, „Pour les Peuples d'Orient“ (Organe des Revendication Arméniennes)։

Պարիզեան երկու մեծանուն հրապարակագիրների մասնակցութիւնը երաշխիք է թերթի լրջութեան և ազդեցութեան։ Առաջին համարը բաղկացած է 12 էջից և պարունակում է խմբագրականներ (Պրեսսանսէի ու Բերարի), ապա մի յօդուած Ժան Լանգէի, մի շարք մեռած հայասէրների մասին (Պիէռ Կիյեաս, Էլիկ Ռէկլիս, Ալբեր Վանդալ, Ան. Լերուա Բոլիո, Ժորժ Դոլիս), ապա գալիս են տեղեկագիրներ ու փաստեր թիւրքահայոց վիճակի մասին։

Օրգանը ունի իր անդլիերէն բաժինն ևս, յատկապէս Անգլիայի մէջ հանրային կարծիք պատրաստելու նպատակով։

Վստահելի աղբիւրից մեզ հաղորդում են, որ երկու նշանաւոր հայասէր քաղաքագէտները ստեղծել են այդ օրգանը սեփական նախաձեռնութեամբ, որ նրանք որոշած են հրատարակել այն անընդհատ, մինչև հայկական խնդրի վերջնական ու բաւարար լուծումը, որ այդ նպատակի համար նրանք ունին համակրողներ ու աջակիցներ ֆրանսիական ազդեցիկ շրջաններում։

Թերթի շուրջը հավախմբուած մարդիկ ի հարկին պիտի ստեղծեն մասնաճիւղեր Անգլիայում և այլ տեղերում, պիտի կազմակերպեն միտինգներ՝ հանգէպ գալոց վեհաժողովի և այլն։ Տեղեկացնում են մեզ, վերջապէս, որ այդ օրգանը և բոլոր յարակից ձեռնարկներն ապահովելու համար՝ թերթի երկու տնօրէնները պատրաստ են ընդունելու նուիրատուութիւններ *)։

Օրգանը, ինչպէս երևում է այդ առաջին համարից, չունի

*) Հասցէները. M. Fr. de Pressensé, 85, Bd. du Port-Royal.

M. Victor Bérard. Rue Denfert-Rochereau, 75, Paris (France)։

բնաւ հակաթիւրք բնաւորութիւն։ Նա յորդորում է օսմանեան կառավարութեանը շուտափոյթ իրագործել հայկական ռէֆորմները, եթէ չի ուզում կորցնել նաև իր ասիական հողերը։ Օրգանի իդէան է՝ ստեղծել Թիւրքահայաստանից մի մեծ Լիբան (միանգամայն ավտոնոմ, ինքնօրէն)։ Այդպէս է թելադրում Պրեսսանսէ իր առաջին յօդուածում։

***

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼ։ ՄԷՋ.

Լրագրական յօդուածներից յիշենք Դ-ր Ն ի կ օ ղ է ն ի մի փաստալի գրութիւնը, զետեղուած Temps-ի մէջ, Կոմս Դը Մենի մի յօդուածը Echo de Paris-ի մէջ, Ֆիկին Սէվրինի մի հուժկու և յուզիչ նամակը Intransigeant-ի մէջ ի պատասխան մի երկու թիւրքամոլ ֆրանսիացիների յիշոցներին։ Ապա մի շարք յօդուածներ Patrie-ի մէջ, որ պատկանում են Ռոշֆորի գրչին։ Սիստեմատիկ պրոպագանդ է սկսած և Լոնդոնի ազդեցիկ հանդէսներից մէկը, The Nation, որ շարունակող է դլադստոնեան աւանդութիւնների։ Նա թելադրում է՝ անպայման դնել հայկական հարցը առաջիկայ վեհաժողովի առջև։

Temps լրագիրը հրատարակեց Պարիզի հայ ուսանողների մի հակիրճ գրութիւնը,—30-ի չափ ստորագրութիւններով—որ մի քանի խօսքով բնորոշում է Հայաստանի կայութիւնը և հարց է տալիս, միթէ Ֆրանսիան կարող է սահմանափակուել սակ արևելեան կաթոլիկների վրայ տարածելով իր հովանին... Temps-ի խմբագիրը աւելացնում է իր կողմից, որ, հարկաւ, Ֆրանսիական կառավարութիւնը կը կատարէ իր պարտքը հայերի վերաբերմամբ։

Հայկական հարցը բազմաթիւ հեռագիրներով ու նոտերով արծարծուում է նաև ռուսական ու գերմանական թերթերում։

***

ՀԱՆԴԷՍՆԵՐ։ ՄԷՋ.

„Les Document du Progrès“ միջազգային ամսագիրը, որ հրատարակուում է միաժամանակ չորս լեզուներով — Պարիզ, Լոնդոն, Բերլին և Պետերբուրգ — հրատարակեց Մ. Վարանդեանի մի յօդուածը „Թիւրքիայ տագնապը և հայկական խնդիրը“ վերնագրով (La Crise Turque et Problème Arménien)։ Պարիզեան La Revue-ն հրատարակեց նոյն հեղինակի մի այլ յօդուածը „Les Arméniens dans les Révolutions Orientales“։ Ամսաթերթում „Գիտական Հանդէս“ լոյս ընծայեց այդ յօդուածը հոլանդական թարգմանութեամբ։ Վերջապէս նոյն հեղինակի մի ընդարձակ տեսութիւնը լոյս տեսաւ „Die Neue Zeit“ շաբաթաթերթում, որ գերման Սոցիալ-Դեմոկրատիայի թէորիական օրգանն է։ (Die „Daschnakzutiun“ und die Emanzipationskämpfe im Orient)։

***

Հ. Յ. Դաշնակցութեան պատուիրակը Միջազգ. Ընկերվ. Բիւրօի մէջ, անկարող լինելով ներկայ գտնուել Բաղէշի վերջին արտակարգ համաժողովին, ղրկեց նրան Պարիզից հետևեալ հեռագիրը (հրատարակուած Humanité-ի մէջ).

„Քաղաքացիներ,

„Միջազգային արտակարգ կոնգրէն, որ գումարուած է արևելեան ճգնաժամի գերագոյն պահուն՝ չի կարող անտես առնել ասիական Թիւրքիոյ, մանաւորապէս Հայաստանի ճակատագիրը։ Զորս տարեայ սահմանադրական ռէժիմը բերեց հայ յեղափոխականներին ու ընկերվարականներին մի դառն յուսախաբութիւն միայն։ Ապարդիւն կերպով մենք աջակցեցինք, յորդորեցինք ու խրախուսեցինք երիտասարդ թիւրքերին դէպի առաջադիմութիւն ու վերածնութիւն։ Բերելով հանդերձ մի քանի ազատութիւններ՝ մամուլի, խօսքի, գումարումի՝ նրանք երբէք չկամեցան լուրջ ռէֆորմներ մտցնել Հայաստանի մէջ, ուր շարունակուում է դանդաղ բնաջնջման պրոցէսը։ Զինելով ու խրախուսելով թալանչի և կոտորող քրդերին, կառավարութիւնը խլում է մեր ժողովրդից ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները։ Եւրոպական Թիւրքիոյ կործանումը անխուսափելիօրէն պիտի անդրադառնայ Հայաստանում։ Գազանութիւնները սկսած են արդէն Վանի շրջանում և սպառնում են վերածուիլ արիւնոտ աղէտի։

„Քաղաքացիներ. Ցարշափ հիմնական բարենորոգումները չեն գործադրուի այդ վայրերում, Հայաստանը պիտի մնայ մի նոր օճախ անկարգութեան, իրտրիգների, ընդհարումի, պատերազմի։ Արևելեան խնդիրը պիտի յարատևի։ Անհրաժեշտ է, հետևապէս, որ ընկերվարական կուսակցութիւնները ձեռնարկեն գործօն պրոպագանդի՝ պարլամենտներում ու մամուլի մէջ և նպաստեն հայոց հարցի արդար լուծման, որ այնքան մօտ առնչութիւն ունի միջազգային խաղաղութեան կնճռի հետ“։

ՆԻՒՐԱՏԻՊԱՐԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն ստացած է՝

Լիվրպուլից՝ Խաչ. Մամասեանի միջոցով 51 դոլլար, ի նպաստ կովկասահայ բանտարկեալների։ Նէիրատուներն են. — Խաչատուր Մամասեան 240 դրշ., Բեռոբ Տ. Պօղոսեան 126, Յակոբ Միսաքեան 120, Յակոբ Մելիքեան 84, Թորոս Կարապետեան 54, Խաչատուր Խանմեան 48, Պօղոս Զաքոյեան 42, Յարութիւն Շահարեան 36, Գրիգոր Եաղուպեան 36, Մանուկ Փերեցեան, Աւագ Հոլստիկեան, Ասատուր Սիմոնեան, Անարոն Սաղրեան, Առաքել Մանոյեան, Պօղոս Ասատուրեան, Պօղոս Մուրադեան, Միքայէլ Սահակեան, Սիմոն Յակոբեան 30-ական դրշ., Գեղէօն Վարդանեան, Պետրոս Սահակեան, Շահին Շահրիկեան, Ստեփան Տ. Ստեփանեան 24-ական դրշ., Պետրոս Մակարեան, Միքայէլ Տ. Խորոմեան, Դաւիթ Գաբոյեան, Կարապետ Խաչատուրեան 18-ական դրշ., Գրիգոր Բէյլեան 15 դրշ, Տիգրան Մաքէոսեան, Փիլիպոս Բարսեղեան 12-ական դրշ., Մարգար Յովսէփեան, Կիրակոս Վարդանեան, Աւետիս Սահակեան, Նշան Գալուստեան 6-ական դրշ., Յարութիւն Տէտէեան 24 դրշ.: Դումար 1314 դրշ.:

ԱԶԴ

Կը հրաւիրենք մեր ընթերցողներուն՝ բաժանորդագրիլ առաջիկայ տարուան համար։

Բաժանորդագինը — 5 ֆրանկ (1 դոլլար, 2 ռուբլի) տարեկան։

Հասցէ՝ Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse).